ՇՈՒՌՆՈՒԽՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Իրավական վերլուծություն

Հեղինակ՝ Վաղինակ Տեր-Հովհաննիսյան
Գեղ. խմբագիր՝ Կարինե Աղաջանյան
Վերլուծությունն իրականացվել է «Փինք»
իրավապաշտպան հասարակական
կազմակերպության կողմից՝ ԻԼԳԱ Եվրոպա
կազմակերպության օժանդակությամբ

Էլ.հասցե՝ info@pinkarmenia.org
Վեբ-կայք՝ www.pinkarmenia.org
Երևան, 2019

Բովանդակություն

Ներածություն---------- 6
Հասկացություններ---------- 7
Հապավումներ---------- 8
Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավիճակի համառոտ նկարագիրը---------- 9
Ուսումնասիրության նպատակը և մեթոդաբանությունը---------- 13

ՇՈՒՌՆՈՒԽՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ԱՐՁԱԳԱՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների միջազգային և ներպետական իրավակարգավորումները---------- 14
Ատելության խոսքի միջազգային և ներպետական իրավակարգավորումները---------- 17
Ատելություն, անհանդուրժողականություն և թշնամանք հարուցող խոսքի դրսևորումների ազդեցությունն ու վտանգավորությունը---------- 21
Պետական պաշտոնյաներ---------- 22
Հասարակական միավորումներ---------- 27
Կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ---------- 28
Ձանգվածային լրատվության միջոցներ---------- 31
Հասարակություն---------- 33
Ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության առկայության վերլուծությունը---------- 37
Ատելության խոսքի առկայությունը---------- 41
Արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումն ատելության խոսքի համատեքստում---------- 47
Ոստիկանության արձագանքը---------- 51
ՄԻՊ արձագանքը---------- 53
Եզրահանգում---------- 54
Առաջարկություններ---------- 56
«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի մասին---------- 57

Ներածություն

Սույն հետազոտությունը ներկայացնում է Շուռնուխ գյուղում 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ կատարված բռնության դեպքի արձագանքի իրավական վերլուծությունն ատելության խոսքի համատեքստում: Մասնավորապես, ներկայացվում է ուսումնասիրության նպատակը և մեթոդաբանությունը, ինչպես նաև խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի միջազգային և ներպետական իրավակարգավորումները: Հակիրճ անդրադարձ է կատարվում վերջին տարիներին Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավիճակին, նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա վերհանված խնդիրներին ու եզրակացություններին, ապա՝ տուժողների, ենթադրյալ իրավախախտների և դեպքի վերաբերյալ իրավապահ մարմինների ներկայացրած համառոտ տվյալներին, ներպետական մարմինների, տեղական կազմակերպությունների, կառույցների, հասարակական և կրոնական կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների, զանգվածային լրատվության միջոցների, հասարակության արձագանքին՝ արտահայտություններին ու արված հայտարարություններին, դիրքորոշումներին: Այնուհետև վերլուծվում է վերոնշյալ խմբերի հրապարակային խոսքի՝ ատելություն, անհանդուրժողականություն և թշնամանք հարուցող բնույթը՝ մեկնաբանելով դրանց բովանդակությունը, շարժառիթներն ու հիմնավորումները, դասակարգումը, ազդեցությունը, վտանգավորությունը: Արդյունքում՝ վերլուծության հիման վրա ներկայացված են առաջարկություններ պետական մարմիններին և ՁԼՄ-ներին:

reshot

Հասկացություններ

Ատելության հիմքով հանցագործություն – քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով:

Ատելության խոսք – ցանկացած արտահայտություն, որը տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում է ռասսայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ անհանդուրժողականությունը՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և էթնոցենտրիզմով, խտրականությամբ և փոքրամասնությունների, միգրանտների և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ բռնություններով:

Բիսեքսուալ (երկսեռական) – անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի գենդերների նկատմամբ:

Գեյ (նույնասեռական տղամարդ) — անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի նկատմամբ:

Գենդեր – վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից: Գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ:

Գենդերային ինքնություն – անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:

ԼԳԲՏ համայնք – լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից:

Լեսբի (նույնասեռական կին) — անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

Խտրականություն – անձի իրավունքների և ազատությունների ցանկացած հիմքով տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ

համաչափության, որն ունի անձի իրավունքների և հիմնարար ազատությունների՝ հավասար հիմունքներով ճանաչումը, իրականացումը կամ դրանցից օգտվելը ոտնահարելու կամ սահմանափակելու նպատակ կամ ազդեցություն:

Հետերոսեքսուալ (տարասեռական) — անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ:

Հոմոսեքսուալ (նույնասեռական) — անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձանց հետ:

Հոմոֆոբիա – երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող մարդկանց և նույնասեռականության նկատմամբ:

Սեռական կողմնորոշում — անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ:

Պաշտպանված հատկանիշ – անձի կամ անձանց խմբի ընդհանուր հատկանիշ՝ ըստ սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, ռասսայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկ հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների:

Սեռականություն — անձի կենսաբանական և սոցիալ-հոգեբանական բնութագրիչների ամբողջություն, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ:

Հապավումներ

ԼԳԲՏ	հապավում լեսբի (նույնասեռական կին), գեյ (նույնասեռական տղամարդ), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր անձանց համար:
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն:
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն:
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան:
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա:
ՌԱԵՀ	Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով:
ՏՍՄԻԿ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե:
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր

Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավիճակի համառոտ նկարագիրը

Ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում ԼԳԲՏ անձանց, ինչպես նաև ԼԳԲՏ ակտիվիստների և համախոհների հանդեպ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտը պայմանավորված է բազմաթիվ և տարատեսակ հանգամանքներով: ԼԳԲՏ անձինք ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական բռնության, շարունակական սպառնալիքների և հետապնդումների, ճնշումների ու նվաստացումների հասարակական լայն շերտերում, ներառյալ՝ ընտանիքում, ընկերական շրջապատում, առողջապահական, կրթական հաստատություններում, աշխատավայրում և այլն:

Ըստ յուրաքանչյուր երկրի առանձնահատկության, ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականության և ատելության մթնոլորտը որոշակի առումներով պայմանավորված է ազգայնականության մակարդակով, կրոնով, սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով և այլ բազմազան հանգամանքներով: Խտրականության և խարանի մթնոլորտն էլ ավելի է սրվում, երբ իշխանությունները չունեն համապատասխան քաղաքականություն՝ պայքարելու խարանի և խտրականության դեմ:

Այսինքն, ԼԳԲՏ անձանց հանդեպ բացասական վերաբերմունքն աճում է օրենսդրական բացի, պետական ծառայողների խտրականություն և անհանդուրժողականություն սերմանող վարքագծի և խնդիրներին համապատասխան արձագանքելու քաղաքական կամքի բացակայության պայմաններում: Վերջիններիս է համալրվում տվյալ երկրի ավանդապաշտական և մշակութա-արժեքային մոտեցումները, հասարակության իրավագիտակցության ցածր մակարդակը, և ըստ այդմ, ԼԳԲՏ անձանց նկատմամբ ծայրահեղական, բացասական վերաբերմունքը դառնում է ակնհայտ և հանգեցնում վտանգավոր դրսևորումների:

Այսպիսի իրադրություն է տիրում նաև Հայաստանում: Ինչպես վկայում են Հայաստանում իրականացված բազմաթիվ միջազգային և ներպետական հետազոտություններն ու ուսումնասիրությունները, ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելությունը, անհանդուրժողականությունը, խտրականությունը, բռնություններն ամենօրյա իրողություններ են[1]: Այսպես, ըստ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ տարեկան զեկույցի, 2017 թվականին սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով 30 իրավախախտում է գրանցվել, որոնցում արձանագրվել են կյանքի իրավունքի, խոշտանգումներից կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, կարծիքի արտահայտման ազատության, խտրականության և ատելություն սերմանող խոսքից զերծ մնալու և այլ իրավունքների խախտումներ[2]:

Դիտարկելով սոցիալական վարքի փոփոխության մոդելի տեսանկյունից՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա այդ վերաբերմունքն ու ընկալումները պայմանավորված են մարդկանց գիտելիքներից, վերաբերմունքից, դիրքորոշումից և դրանցից բխող գործողություններից[3]:

---

[1] *«ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. Տեսությունից իրականություն»,«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, Երևան, 2016թ. http://www.pinkarmenia.org/wp-cntent/uploads/2016/11/hate-crime-monitoring-2016_hy.pdf*

[2] *«Տարեկան զեկույց. ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2017թ.», «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, Երևան, 2018թ. http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2018/07/2017annualreview_hy.pdf*

Նիկոլ Փաշինյանի կողմնակիցներն արձագանքում են 2018-ի մայիսի 1-ին Երևանում վարչապետի ընտրության համար խորհրդարանի արտահերթ նիստի ուղիղ հեռարձակմանը: AFP

Այսպես, չափազանց կարծրատիպային և ոչ իրազեկված պայմաններում, չհիմնված գիտական բացատրությունների վրա, հայաստանյան հասարակության մեծամասնությունը նույնասեռականությունը ընդունելով որպես «ոչ ավանդական» սեռական կողմնորոշում՝ դիտարկում է այն որպես հիվանդություն, արևմտյան երկրների բացասական ազդեցություն, դաստիարակության հետևանք և, անգամ, ժամանակակից պայմաններում համացանցով շփման արդյունք[4]: Անհանդուրժողականության չափազանց մեծ մթնոլորտի փաստի արձանագրում կատարվել է դեռևս 2011թ.-ին: Այսպես, Հայաստանում իրականացված Համաշխարհային արժեքների հարցման տվյալներով հարցվածների 93%-ը չի ցանկացել ունենալ նույնասեռական հարևան, իսկ 96%-ը կարծել է, որ նույնասեռականությունը չի կարող արդարացված լինել[5]:

Այսպիսի գիտելիքների, իրազեկվածության պայմաններում հասարակության մեծամասնության մոտ ԼԳԲՏ անձանց հանդեպ ձևավորվել է բացասական վերաբերմունք (72,1%), որոնց բնութագրումը ուղեկցվում է վիրավորանքներով, հայհոյանքներով և անձնային բացասական պիտակներով[6]:

Իսկ նման վերաբերմունքի առկայության դեպքում հասարակությունում արմատանում է այն դիրքորոշումը, որ ԼԳԲՏ անձինք տարօրինակ մարդիկ են, իսկ այդ երևույթը շեղում է, և պետք է դատապարտվի հասարակության կողմից[7]: Արդյունքում, թերի կամ անիրազեկության, անհանդուրժող վերաբերմունքի ու դիրքորոշման պայմաններում, մարդիկ հակված են դադարեցնել ԼԳԲՏ անձանց հետ շփումը կամ փորձել նրանց վրա ազդել, որպեսզի փոխեն իրենց սեռական կողմնորոշումը, իսկ նրանց բռնության ենթարկվելը հասարակությունը անտարբերության է մատնում[8]: Հայաստանում կատարված հետազոտությունները ցույց

---

[3] *«ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում», «Ոցիոսկոպ» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ներ, Երևան, 2011, էջ 9. http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2017/06/lgbtsurvey.pdf*
[4] *Տե՛ս, նույն տեղը, էջ 10:*
[5] *Համաշխարհային արժեքների հարցման կայքէջ, 2011թ. http://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV6.jsp*
[6] *Տե՛ս, նույն տեղը, էջ 14:*
[7] *Տե՛ս, նույն տեղը, էջ 16:*
[8] *Տե՛ս, նույն տեղը, էջ 18:*

են տալիս, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ դիրքորոշումները պայմանավորված են որոշակի արժեքային կողմնորոշումներով: 2016թ.-ին կատարված հետազոտության արդյունքում պարզվել է, որ հարցվածները հակված են ավտորիտարիզմի, այսինքն՝ հասարակության մեջ կարևորվում են արդեն ամրագրված նորմերն ու սովորույթները, իսկ որևէ շեղում, նոր երևույթ կամ դեռևս չի արժանացել համապատասխան ընդհանուր դիրքորոշման, կամ չի խրախուսվում:

Հարցվածները հակված են իշխանությունների նկատմամբ լոյալության, լոյալ են իշխանությունների և հեղինակությունների նկատմամբ, հակված են հետևելու նրանց հրահանգին: Հետազոտության արդյունքում պարզվել է նաև, որ հարցվածների մոտ առկա է հակվածություն դեպի կրոնական արմատականություն: Բացի այդ, հարցվածների շրջանում գերիշխում են միակ աստվածային ճշմարիտի մասին համոզմունքները, ինչպես նաև այլ սոցիալական խմբերի նկատմամբ խտրական դիրքորոշման առկայությունը: Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ հարցվածների շրջանում սոցիալական խմբերի միջև խտրականության և աստիճանակարգի նկատմամբ հակվածություն կա[9]: Սակայն անհանդուրժող վերաբերմունքն ու անտարբեր վարքագիծը չի սահմանափակվում այդպիսի գործողություններով: Սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված ԼԳԲՏ անձինք ենթարկվում են խտրականության տարբեր դրսևորումների: Չնայած Հայաստանում ԼԳԲՏ համայնքի մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ չկա բավարար ճշգրիտ վիճակագրություն (պայմանավորված որոշակի հանգամանքներով), սակայն ըստ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների հանդեպ ոտնձգությունների և հարձակումների վերաբերյալ զեկույցների՝ դրանք Հայաստանում տարածված բնույթ ունեն[10]: Իսկ հարձակումների մեծ մասն, ըստ էության, ատելության հիմքով կատարված հանցագործություններ են, որոնք իրականացվել են խտրական շարժառիթներով[11]: ԼԳԲՏ անձանց հանդեպ շատ հաճախ դրսևորվող խտրականության ձևերից են ատելության կոչերը, հեգնանքը և ծաղրը, արհամարհանքը, ֆիզիկական բռնությունը, շանտաժը, նվաստացումը, ստորացումը, հետապնդումը, սեռական բնույթի բռնի գործողությունները, ծառայությունների ոչ պատշաճ տրամադրումը և այլն: Նման վերաբերմունքի արժանացել են ոչ միայն կրթական, առողջապահական հաստատություններում, աշխատավայրում, բանակում, ընտանիքում, այլև՝ անգամ ոստիկանությունում[12]:

Մարդու իրավունքների և ազատությունների ոչ պատշաճ իրացման և պաշտպանության այսպիսի պայմաններում, մեծ թվով ԼԳԲՏ անձինք ստիպված են լինում լքել հայրենիքը: Երկրից հեռանալու նրանց հիմնական դրդապատճառներն է «սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկված լինելու հանգամանքը»[13]: Հայաստանում ԼԳԲՏ էմիգրացիայի առանձնահատուկ խթանիչ գործոններն են՝ ֆիզիկական անվտանգության սպառնալիքները և անպաշտպանությունը պետությունից, ընտանիքից մերժվածությունը կամ մերժված լինելու վախը, ազատ ինքնադրսևորման և ինքնության ճանաչման սահմանափակումները, մեկուսացումը, հոգեբանական ճնշումները, սոցիալական կարգավիճակի կորուստը և կորստի վախը, շանտաժը, ճնշումները և այլն[14]: Փաստորեն

---

[9] «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, Երևան, 2016թ. http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf

[10] «Դուրս մղվածները. ԼԳԲՏ անձինք Հայաստանում», ILGA Եվրոպա/COC Նիդերլանդներ, Ա. Քարոլ և Ս.Քուին, 2009թ. https://www.ilga-europe.org/sites/default/files/Attachments/forcedoutarmenia.pdf

[11] «Հայաստան. Փոփոխությունների համար տեղ չկա», Amnesty International, 2013թ., էջ 15. https://www.amnesty.org/download/Documents/16000/eur540022013hy.pdf

[12] «Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումների վերաբերյալ մոնիտորինգ», «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ և COC Նիդերլանդներ, Երևան, 2013թ.http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2017/06/LGBTmonitoringhy.pdf

[13,14] «ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա», «Ոցիոսկոպ» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ներ, Երևան, 2015թ., էջ 17. http://www.pinkarmenia.org/publication/lgbtemigration.pdf

մնացած մասն ապավինում է որոշ իրավապաշտպան կազմակերպությունների օգնությանը կամ մեկուսանում է, կամ էլ շարունակում է ապրել օրըստօրե աճող ատելության մթնոլորտում, խտրականության և բռնության ենթարկվելու վախի և իրական վտանգի պայմաններում:

Հայաստանի Հանրապետությունը, ստորագրելով և վավերացնելով մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, պարտավորվել է ստանձնել ձեռնարկելու կոնկրետ քայլեր՝ բարելավելու ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրադրությունը Հայաստանում, ինչպես նաև պայքարելու ԼԳԲՏ անձանց հանդեպ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ցանկացած տեսակի խտրականության, ատելության խոսքի, ատելության հիմքով հանցագործությունների դեմ:

Հատկանշական է իրավապահ, դատական մարմինների դերը՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտման և արդարացի պատասխանատվության ու պատժի ենթարկման գործում, սակայն, հիմք ընդունելով ինչպես մի շարք միջազգային կառույցների և կազմակերպությունների, ինչպիսիք են՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ՌԱԵՀ , Իլգա-Եվրոպա, Ամնեսթի Ինթերնեշնլ և այլն, այնպես էլ՝ ներպետական կառույցների զեկույցները, հետազոտությունները, հաշվետվությունները՝ պետական քաղաքականությունը խտրականության բացառման և իրավահավասարության ապահովման ոլորտում արդյունավետ չէ, թե՛ օրենսդրական, թե՛ գործնական առումով:

Այդ է փաստում նաև 2018թ.-ի օգոստոսին Շուռնուխ գյուղում իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված բռնության գործադրումը 9-ը երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ:

Ուսումնասիրության նպատակը և մեթոդաբանությունը

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել Շուռնուխ գյուղում 9-ը երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված բռնության դեպքի շրջանակներում պետական և ոչ պետական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների և հատկապես՝ հասարակության արձագանքը, հնչեցրած արտահայտություններն ու արված հայտարարությունները, ընկալումներն ու վերաբերմունքը, դիրքորոշումները և դրանց հնարավոր հետևանքները ԼԳԲՏ անձանց, ակտիվիստների նկատմամբ՝ խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների, և մասնավորապես՝ ատելության խոսքի համատեքստում:

Սույն ուսումնասիրության մեթոդաբանությունն է՝ առցանց տիրույթից դուրս բերել, մասնավորապես՝ պաշտոնական կայքէջերից, սոցիալական ցանցերից (հատկապես՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցից), զանգվածային լրատվության միջոցներից և այլ կայքերից, ինչպես նաև պաշտոնական հրապարակումներից, հայտարարություններից Շուռնուխ գյուղում կատարված բռնության դեպքի հետ կապված տեղեկություններն ու հնչեցրած ատելության խոսքերը, արված հայտարարությունները, մեկնաբանությունները արտահայտությունները, ինչպես նաև իրականացնել ատելության խոսքի այլ դրսևորումների հավաքագրումը, ուսումնասիրությունը, տարբերակումը, վերլուծությունը: Ընդհանուր առմամբ, վերլուծելով այդ խմբերի արձագանքի իրավաչափության, օրինականության սահմանները, սույն վերլուծությունը նպատակաուղղված

2017թ «Ոսկե ծիրան» կինոփառոտնից հանված «Լսիր ինձ. չպատմված պատմություններ ատելությունից անդին» ֆիլմը արվեստագետ Արտակ Գևորգյանն այս տարի մտցրեց փառատոն, բայց ֆիլմը չէ, ինստալյացիան՝ ֆիլմի հերոսների խոսքերով ու ձայնային միջամտությամբ

է պարզելու Շուռնուխ գյուղում ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ գործադրված բռնության հաջորդած արձագանքներում՝

ա) ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք պարունակող խոսքի առկայությունը՝ միջազգային և ներպետական իրավակարգավորումների կոնտեքստում

բ) խտրականության դրսևորումները

գ) ինչո՞վ է պայմանավորված ատելության խոսքը կամ ինչո՞վ է արդարացվել/ում բռնությունը

դ) ատելության խոսքի դրսևորման ձևերը (ի՞նչ է ասված տվյալ արտահայտությամբ, թեմատիկան, վերաբերմունքը (քննադատություն, համաձայնություն կամ չեզոք), ընկալումները)

ե) ատելության խոսքի հեղինակների զբաղեցրած դիրքն ու ազդեցությունը, վտանգավորությունը (ֆիզիկական անձ, քաղաքական գործիչ/պետական պաշտոնյա, գիտնական, մասնագետ/փորձագետ, հասարակական գործիչ, կրոնական կազմակերպության ներկայացուցիչ և այլն), և այլն:

Վերհանված խնդիրների, դրանց նախադրյալների, հնարավոր հետևանքների, պատճառահետևանքային կապերի, ազդեցության արձանագրման և դրանց հիման վրա՝ առաջարկությունների ներկայացման արդյունքում, սույն վերլուծությունն ուղեցույց կլինի պետական մարմինների համար ջանքերն առավել արդյունավետ գործադրելու՝ Հայաստանում ԼԳԲՏ անձանց և նրանց համախոհների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարելու համար՝ ներառյալ ձեռնարկելու կոնկրետ և գործուն քայլեր հասարակությունում անհանդուրժողականության մթնոլորտը վերացնելու, ատելության խոսքի, ամեն տեսակ խտրականության և դրանով պայմանավորված բռնությունների բացառման ուղղությամբ:

Խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների միջազգային և ներպետական իրավակարգավորումները

Խտրականության բացառման, ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի դեմ պայքարի իրավական միջոցներն ամրագրվել են միջազգային իրավական փաստաթղթերում:

Պարզելու համար արդյո՞ք Շուռնուխ գյուղում 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ արձագանքը պարունակում են ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային հիմքով խտրականություն, վերաբերմունքը պարունակող արտահայտություններն՝ ատելության խոսք, նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել և հասկանալ, թե ինչ է խտրականությունը, խոսքի ազատությունն ու ատելության խոսքն ընդհանրապես: Անհրաժեշտ է նաև անդրադառնալ նրան, թե ինչ է ատելության հիմքով հանցագործությունը, և ինչպես են ատելության խոսքն ու ատելության հիմքով հանցագործությունները փոխկապակցված:

Այսպես, խտրականության արգելքը ամրագրվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1-ին, 2-րդ, 7-րդ հոդվածներ)[15], Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (14-րդ հոդված)[16], Կոնվենցիայի թիվ 12 Արձանագրությամբ[17], Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (26-րդ հոդված)[18]: Իսկ ներպետական օրենսդրությամբ խտրականության համընդհանուր արգելքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ (29-րդ հոդված)[19]: Այնուամենայնիվ, Հայաստանում խտրականության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ առկա չեն, քանի որ վերջինս չունի խտրականության դեմ պայքարի առանձին օրենսդրություն, որը հնարավորություն կտա սահմանելու խտրականության հասկացությունը, դրա տեսակները, խտրականության ենթարկված անձանց իրավական պաշտպանության միջոցների և եղանակների, խտրականության դեպքերի քննության առանձնահատկություններին վերաբերող հիմնական իրավակարգավորումները[20]: Իսկ խտրականությունն արգելող առանձին օրենքների առկայությունը համարվում է ատելության հիմքով հանցագործությունները կանխարգելող մեխանիզմ[21]:

Խտրականության եզրույթի առավել բնորոշ սահմանումն է տվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ): Այսպես, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում (թիվ 40094/05) ***խտրականությունը*** սահմանվել է որպես՝ ***էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորում՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության՝ սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի հիմքով***[22]:

Ինչպես սահմանված են Եվրոպայի անվտանգության և համագործակցության նախարարական խորհրդի «Ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ» թիվ 9/09 որոշմամբ, «Ատելության հիմքով հանցագործությունները կանխակալությամբ կատարված քրեական հանցագործություններ են»[23]: Այսինքն, ատելության հիմքով հանցագործությունները հանցագործության այլ տեսակներից տարբերվում են հանցագործի դրդապատճառներով: Հետևաբար, որպեսզի իրավախախտի արարքը որակվի ատելության հիմքով հանցագործություն, այն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին, նախ՝

1) գործողությունը պետք է հանցագործություն համարվի այն երկրի քրեական օրենսդրությամբ, որտեղ, որ այն կատարվել է, ապա՝

2) հանցագործությունը պետք է իրականացված լինի կանխակալ դրդապատճառներով:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի «Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենք»-ի գործնական ուղեցույցում ատելության հիմքով հանցագործությունը հստակորեն սահմանվում է որպես ***քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով՝ հստակ տարանջատելով, որ վերջինս բաղկացած է երկու հիմնական տարրերից՝ հանցագործություն, որը կատարվել է ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով[24]:*** Իսկ «կանխակալ դրդապատճառ» նշանակում է, որ իրավախախտը հանցագործության թիրախն ընտրում է՝ պայմանավորված որոշակի հատկանիշներով: Ատելության հիմքով հանցագործության թիրախը կարող է լինել անձը, մեկ կամ ավելի ընդհանուր հատկանիշներ ունեցող անձանց խումբը, ինչպիսիք են նրանց մաշկի գույնը կամ էթնիկական ծագումը և այլն: Ատելության հիմքով հանցագործությունը կարող է արտահայտվել տարբեր ձևերով, օրինակ, ահաբեկման, սպառնալիքների, հարձակման, սպանության, գույքային վնասի կամ ցանկացած այլ քրեական հանցագործության ձևով: Կանխակալությունը հանցագործությունը դարձնում է ավելի ծանր, քանի որ անմիջական զոհի նկատմամբ հանցագործություն կատարելով, հանցագործը «ուղերձ է հղում» նույն հատկանիշներն ունեցող անձանց խմբին: Ինչպես նշվում է ԵԱՀԿ ուղեցույցում, «ատելության հիմքով հանցագործություններն անհանդուրժողականության բռնի դրսևորումներ են և խորապես ազդում են ոչ միայն անմիջական զոհի, այլ նաև այն խմբի վրա, որի հետ զոհն ինքն իրեն նույնականացնում է: Որևէ անձի ինքնությունը թիրախ դարձնելով՝ ատելության հիմքով հանցագործություններն ավելի մեծ վնաս են պատճառում, քան սովորական հանցագործությունները: Անմիջական զոհը կարող է ստանալ մեծ հոգեբանական վնասվածքներ և խոցելիության ավելի մեծ զգացում, քանի որ նա չի կարող փոխել այն հատկանիշը, որը նրան զոհ է դարձրել: Ատելության հիմքով հանցագործություններն ավելի խորը հոգեբանական ազդեցություն ունեն զոհերի վրա՝ առաջացնելով ընկճախտի և տագնապի զգացումներ»[25]:

Ինչպես նշվեց, հանցագործությունը կհամարվի ատելության հիմքով կատարված, եթե առկա է տուժողի որոշակի հատկանիշով պայմանավորված շարժառիթ: Իսկ դա նշանակում

[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896
[16] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870
[17] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=24495
[18] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500
[19] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510
[20] http://www.epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/Research-on-Anti-discrimination_-21.05.15-ENG_Final-1.pdf
[21] https://www.osce.org/odihr/36426?download=true
[22] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-113302
[23] https://www.osce.org/cio/40695?download=true
[24, 25] https://www.osce.org/odihr/36426?download=true

է, որ իրավախախտը կատարել է քրեական հանցագործություն՝ տուժողի պաշտպանված հատկանիշների պատճառով:

Պաշտպանված հատկանիշն անձի կամ անձանց խմբի հատկանիշ կամ առանձնահատկությունն է, ինչպիսիք են՝ սեռը, ռասսան, մաշկի գույնը, էթնիկական ծագումը, սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, կրոնը, տարիքը և այլն: Պաշտպանված հատկանիշը սահմանում է անձի անհատականությունը և կազմում է անձի ինքնության մի մասը: Անձի պաշտպանված հատկանիշի մերժումը նվաստացնում է մարդուն որպես արժեքի՝ իր անհատականությամբ, կարողություններով և փորձով[26]:

Ինչպես նշվեց, ներպետական օրենսդրությունում, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքում չի սահմանվում ատելության հիմքով հանցագործությունը: Այսինքն, ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթներով կատարված հանցագործությունների բացահայտման մեխանիզմները, հանցագործությունից տուժած անձանց իրավական արդյունավետ պաշտպանության երաշխիքները հասնում են գրեթե նվազագույնի: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի դրույթների բովանդակությունից կարող ենք եզրակացնել, որ հանցանքի միայն «...ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի...» շարժառիթների առկայության դեպքում է արարքը համարվում ծանրացնող հանգամանքներում կատարված [27]: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի դրույթների՝ «նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից...»[28]: Այսինքն, տուժողի ցանկացած այլ հատկանիշով պայմանավորված հանցագործության դեպքում չի կարող կիրառվել քրեական օրենսգրքի նշված հոդվածը և արարքը կհամարվի ոչ թե ատելության հիմքով հանցագործություն, այլ հասարակ քրեորեն պատժելի արարք:

ՀՀ քրեական օրենսգրքում ներառված չեն նաև սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես ատելության խոսքից պաշտպանված հատկանիշներ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում միայն ազգային, ռասսայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասսայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունների համար: Այդ առումով Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն (այսուհետ՝ ՌԱԵՀ) իր զեկույցում առաջարկել է ՀՀ իշխանություններին սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը հստակորեն ավելացնել ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի արգելված հիմքերի ցանկում, և որ օրենսգրքում ավելացվի դրույթ, որը հստակորեն կամրագրի հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը՝ որպես ծանրացուցիչ հանգամանք բոլոր սովորական հանցագործությունների դեպքում՝ մատնանշելով, որ նշված լրացումներն անհրաժեշտ կլինեն ԼԳԲՏ անձանց պաշտպանության պատշաճ մակարդակ երաշխավորելու համար[29]:

---

[26] *Cambridge University Press, Protected Characteristics and Social Perceptions: An Analysis of the Meaning of 'Membership of a Particular Social Group', June 2003, available at: http://www.refworld.org/docid/470a33b30.html [accessed 23 September 2018]*

[27] *http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=125137*

[28] *http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123348*

[29] *https://rm.coe.int/fourth-report-on-armenia-armenian-translation-/16808b5538*

Ատելության խոսքի միջազգային և ներպետական իրավակարգավորումները

Թեև ներպետական օրենսդրությամբ ատելության խոսքը սահմանված չէ, այն մեկնաբանվում է այնքանով, որքանով տրված է Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա գործող մարմինների դիրքորոշումներում:

Ատելության խոսքն արտահայտման այն բոլոր ձևերն են, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ անհանդուրժողականությունը՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով), փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը[30]:

Ատելության խոսքը սովորաբար թշնամանք կամ անհանդուրժողականություն է հրահրում անձի կամ որոշակի խումբ մարդկանց նկատմամբ՝ հիմնված ռասսայի, կրոնի, էթնիկ ծագումի, ազգային պատկանելության, սեռի, հաշմանդամության, սեռական կողմնորոշման վրա[31]:
Որոշ պետությունների օրենսդրություններում ատելության խոսքը բնութագրվում է որպես գրավոր կամ բանավոր արտահայտված խոսք, ժեստ կամ վարքագիծ, որը հրահրում է բռնության կան կանխակալ գործողությունների պաշտպանված խմբի կամ անհատի նկատմամբ՝ հիմնված այդ խմբի պատկանելությունից:

Որոշ երկրներում ատելության խոսքը, որպես իրավական տերմին, սահմանված չէ, իսկ մի շարք երկրներում այն քրեորեն պատժելի է: Ատելության խոսքն ամրագրող օրենսդրությունները պայմանականորեն կարելի է երկու տեսակի բաժանել՝ նրանք, որոնք նախատեսված են պաշտպանել հասարակական կարգը, և նրանք, որոնք նախատեսված են պաշտպանել մարդկային արժանապատվությունը[32]:

Այսպես, ***Դանիայի*** օրենսդրությամբ արգելվում է ատելության խոսքը, և այն սահմանվում է որպես հրապարակայնորեն արված հայտարարություններ, որոնք սպառնում, ահաբեկում, վիրավորում կամ նսեմացնում են որևէ խմբի՝ ռասսայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման, հավատի կամ սեռական կողմնորոշման պատճառով[33]:

Կանադայի քրեական օրենսդրությամբ սահմանվում է, որ ցանկացած նույնականացվող խմբի նկատմամբ հանրորեն ատելություն տարածելն իրավախախտում է համարվում[34]: Իսկ նույնականացվող խումբ է նշանակում հասարակության ցանկացած հատված՝ ըստ նրանց մաշկի գույնի, ռասսայի, կրոնի, ազգային կամ էթնիկական ծագման, տարիքի, սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության կամ արտահայտման կամ մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության[35]:

---

[30] *https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505d5b*
[31] *John T. Nockleby, "Hate Speech," in Encyclopedia of the American Constitution. Ed. Leonard W. Levy and Kenneth L. Karst. Vol. 3. 2nd ed. Detroit: Macmillan Reference USA, 2000. p. 1277-1279; http://southernlibrarianship.icaap.org/content/v09n02/brown-sica_m01.html#_ednref2*
[32] *Bell, Jeannine (Summer 2009). "Restraining the heartless: racist speech and minority rights". Indiana Law Journal. 84; https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=1132&context=ilj*
[33] *https://www.retsinformation.dk/Forms/R0710.aspx?id=164192#Kap17*
[34] *http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-319.html*
[35] *http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-318.html*

ՀՀ քրեական օրենսգիրք
«Պաշտոնական տեղեկագիր»
ՓԲԸ

Իսլանդիայի օրենսդրությամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք, ով ծաղրանքի, զրպարտության, վիրավորանքի, սպառնալիքի կամ մեկնաբանությունների կամ որևէ այլ արտահայտման ձևերով, օրինակ՝ նկարների կամ խորհրդանիշների տեսքով, հրապարակայնորեն բռնանում է անհատի կամ մի խումբ մարդկանց վրա, նրանց ազգության, մաշկի գույնի, ռասսայի, կրոնի կամ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա, տուգանվում կամ ազատազրկվում է մինչև 2 տարի ժամկետով[36]:

Նորվեգիայում արգելվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ հրապարակայնորեն արված այն խտրականություն պարունակող հայտարարությունները կամ ատելության խոսքերը, որոնք սպառնում կամ ծաղրում են ինչ որ մեկին կամ հրահրում կամ սերմանում են ատելություն, բռնություն, արհամարհանք՝ պայմանավորված մաշկի գույնով, ազգությամբ կամ էթնիկ ծագմամբ, կրոնով կամ հավատքով, նույնասեռական կողմնորոշմամբ, ապրելակերպով կամ հաշմանդամությամբ[37]:

Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ նույնպես քրեական պատասխանատվություն է նախատեսվում ատելության խոսքի համար, մասնավորապես այն խոսքերի համար, որոնք պարունակվում են ատելություն, սպառնալիք, վիրավորանք՝ մարդու հաշմանդամության, էթնիկ ծագման, ազգային պատկանելության (ներառյալ՝ քաղաքացիություն), ռասսայի, կրոնի, սեռական կողմնորոշման կամ մաշկի գույնի հիմքերով[38]:

Ֆինլանդիայի օրենսդրությամբ սահմանվում է, որ եթե անձը, որը հասանելի է դարձնում հանրությանը կամ այլ կերպ հասարակության մեջ տարածում կամ իր կարծիքն արտահայտելով կամ այլ հաղորդագրությամբ որոշակի խմբի սպառնում, վիրավորվում կամ նվաստացնում է՝ հիմնված նրանց ռասսայի, մաշկի գույնի, ծննդյան կարգավիճակի, ազգային կամ էթնիկ ծագման, կրոնի կամ հավատքի, սեռական կողմնորոշման կամ հաշմանդամության կամ համադրելի հիմքով, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով[39]:

Ֆրանսիայի քրեական և մամուլի մասին օրենսդրություններով արգելում են հանրային կամ մասնավոր հաղորդակցությունները, որոնք զրպարտող կամ վիրավորական են, կամ անձի կամ խմբի նկատմամբ խտրականություն, ատելություն կամ բռնություն են հրահրում՝ պայմանավորված նրանց ծննդյան վայրից, էթնիկ ծագումից, քաղաքացիությունից, ռասսայից,

[36] *https://www.government.is/library/Files/General_Penal_Code_sept.-2015.pdf*
[37] *https://lovdata.no/dokument/NLO/lov/1902-05-22-10/KAPITTEL_2-6#KAPITTEL_2-6*
[38] *http://www.legislation.gov.uk/ukpga/2003/44/section/146*
[39] *http://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1889/en18890039.pdf*

կրոնից, սեռից, սեռական կողմնորոշումից կամ հաշմանդամությունից[40]:

Որոշ պետությունների օրենսդրություններում ատելության խոսքն իրավական սահմանումներում ավելի մանրամասն է պարզաբանված: Մասնավորապես, Մալթայի քրեական օրենսդրությամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք, ով կիրառում կամ դրսևորում է ցանկացած սպառնալիք, հայհոյող, վիրավորական խոսք կամ վարքագիծ, կամ ցուցադրում է որևէ գրավոր կամ տպագիր նյութ, որը պարունակում է սպառնալիք, հայհոյանք, վիրավորանք, և այդ կերպ նպատակ է ունենում հրահրել բռնություն կամ ռասսայական կամ կրոնական ատելություն անձի կամ մարդկանց խմբի նկատմամբ՝ պայմանավորված նրանց գենդերով, գենդերային ինքնությամբ, սեռական կողմնորոշմամբ, ռասսայով, մաշկի գույնով, լեզվով, էթնիկ ծագմամբ, կրոնով կամ հավատքով կամ քաղաքական կամ այլ հայացքներով, քրեական պատասխանատվության է ենթարկվում[41]:

Նիդերլանդների քրեական օրենսդրությամբ սահմանվում է, որ այն անձը, որը հրապարակավ, բանավոր, գրավոր կամ պատկերավոր ձևով, ատելության, խտրականության կամ բռնության գործադրման է հրահրում անձի կամ մարդկանց ունեցվածքի նկատմամբ՝ նրանց ռասսայի, կրոնի կամ իրենց կյանքի փիլիսոփայության, նրանց գենդերի, հետերոսեքսուալ կամ հոմոսեքսուալ կողմնորոշման կամ նրանց ֆիզիկական, հոգեբանական կամ մտավոր անաշխատունակության պատճառով, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ տուգանքով[42]:

Ընդհանուր առմամբ, ԵՄ երկրներից 12-ում է ատելության խոսքը քրեականացված է, մասնավորապես՝ ատելություն, բռնություն, խտրականություն հրահրելը որոշակի խումբ մարդկանց նկատմամբ համարվում է հանցագործություն[43]:

ՄԻԵԴ-ն Ատելության քարոզման համառոտ տեղեկանքում նշում է. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հեղինակները փորձել են ստեղծել ժողովրդավարական արժեքների վրա հիմնված մի ինստիտուցիոնալ շրջանակ՝ ծայրահեղականությունները հաղթահարելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնաբերել է արտահայտման մի շարք ձևեր, որոնք համարվում են վիրավորական և Կոնվենցիային հակասող (այդ թվում՝ ռասիզմը, այլատյացությունը, հակասեմիտիզմը, ագրեսիվ ազգայնականությունը և փոքրամասնությունների և ներգաղթյալների նկատմամբ խտրականությունը)»[44]:

Օրենսդրորեն խոսքը քրեականացվում է՝ դրանում պարունակող կոնկրետ բովանդակության պատճառով: Արգելվող բովանդակությունը (կոնտենտը) խիստ տարբերվում է, որոշ երկրների օրենսդրությամբ խոսքը, որն ատելություն է սերմանում կամ վիրավորում է որոշակի խումբ մարդկանց, պատժելի է: Խոսքի այլ ընդհանուր արգելքներից է այն դեպքում, երբ արատավորում է անձի կամ ազգի «պատիվը» կամ «արժանապատվությունը»: Ռասիստական կամ ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված խոսքը հանցագործության ընթացքում կամ դրանից հետո կարող է շարժառիթի ապացույց լինել և քրեական գործի հետաքննության մի մասը կազմել: Նմանապես, եթե իրավախախտի մոտ եղել են իրեր, որոնք ենթադրում են նրա կողմնակալությունն ու նախապաշարումները, այն կարող է հանցագործության դրդապատճառի ապացույց լինել[45]:

Այսինքն, ատելության խոսքի հիմնական տարրերից է նաև վիրավորանքը:

---

[40] https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20181010
[41] http://www.justiceservices.gov.mt/DownloadDocument.aspx?app=lom&itemid=8574&l=1
[42] https://wetten.overheid.nl/BWBR0001854/2018-09-19#BoekTweede_TiteldeelV_Artikel137c
[43] https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/1226-Factsheet-homophobia-hate-speech-crime_EN.pdf
[44] https://www.echr.coe.int/Documents/FS_Hate_speech_ENG.pdf
[45] https://www.osce.org/odihr/36426?download=true

pinkarmenia.org

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1. հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Սակայն հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով[46]:

Փաստորեն արտահայտությունը վիրավորական համարվելու համար անհրաժեշտ է երեք նախապայմանի առկայություն՝

1. այն պետք է կատարված լինի հրապարակային,

2. արտահայտությունը պետք է լինի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող,

3. արտահայտությունը պետք է կատարված լինի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով, դիտավորությամբ[47]:

[46] *http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=122477*

[47] *«Զրպարտություն եվ վիրավորանք, Ձեռնարկ լրագրողների և փաստաբանների համար», Երևան, 2014, https://www.osce.org/hy/yerevan/123447?download=true*

Ատելություն, անհանդուրժողականություն և թշնամանք հարուցող խոսքի դրսևորումների ազդեցությունն ու վտանգավորությունը

Մինչ ուսումնասիրության առարկային անդրադառնալը, կարիք կա հակիրճ ներկայացնելու, թե ինչ է կատարվել Շուռնուխ գյուղում ըստ ենթադրյալ իրավախախտների[48], տուժող կողմի և լրատվամիջոցների տվյալների [49]:

Օգոստոսի 3-ին Փինք Արմենիան ահազանգ է ստացել, որ Շուռնուխ գյուղում մոտ 30 մարդ, իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հատկանիշներով պայմանավորված, հարձակվել են 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների վրա, ծեծել են վերջիններիս, որի արդյունքում նրանցից մի քանիսը մարմնական վնասվածքներ են ստացել և տեղափոխվել Գորիսի բժշկական կենտրոն:

Գյուղացիները տարբեր լրատվամիջոցներին տրված հարցազրույցներում հայտնել են, թե այդ 9 անձինք եղել են նույնասեռականներ, դրա համար էլ ծեծելու վտարել են գյուղից: ՀՀ ոստիկանության Գորիսի բաժինը քրեական գործ է հարուցել և 9 անձանցից մի քանիսին տուժող ճանաչել: Շուռնուխում կատարված բռնության սույն դեպքն արժանացել է հասարակության բուռն արձագանքի: Մամուլում և սոցիալական ցանցերում դեպքի վերաբերյալ եղել են բազմաթիվ քննարկումներ, մեկնաբանություններ, դիրքորոշումներ, որոնցում պարունակվել են ատելություն, թշնամանք և անհանդուրժողականություն հարուցող խոսքեր: Ստորև առանձին-առանձին կանդրադառնանք և մանրամասնորեն կվերլուծենք յուրաքանչյուր մարմնի, կառույցի, անհատի արտահայտած ենթադրյալ ատելության խոսք պարունակող հայտարարություններին կամ մեկնաբանություններին, ինչից հետո վերոնշյալ ներպետական և միջազգային իրավակարգավորումների շրջանակներում կվերլուծվի նշյալ խոսքերի բնույթը, վտանգավորության աստիճանն ու հնարավոր հետևանքները:

---

[48] *«Զանգեզուր TV», «Շուռնուխի ...շուխուռը... չի դադարում», https://youtu.be/EDOToOJ6t44*
«Իրավունք թերթ», «Հայաստանում ԼԳԲՏ-ականների օրենքն ընդունված չի ու չի էլ ընդունվելու»,https://youtu.be/6bD7etjsEqQ
«Իրավունք թերթ», «Շուռնուխում տեղի ունեցածը ծրագրավորված սցենար էր», https://youtu.be/cm9x8y6cEJ4
«Իրավունք թերթ», «Ինչպես են շուռնուխցի դեռահասները պաշտպանել իրենց գյուղի եւ ծնողների պատիվը»,https://youtu.be/RHIBWrzKvXY
[49]*https://web.facebook.com/pinkarmenia/posts/10156650822405238*
«Փինք Արմենիա», «Մանրամասներ Շուռնուխ գյուղում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ», http://www.pinkarmenia.org/hy/2018/08/violence-shurnukh/
https://www.facebook.com/Armenianombudsman/photos/a.553075014879967/912672098920255/
«Փինք Արմենիա», «Շուռնուխի միջադեպից տուժած գյուղի բնակիչը նաև քաղաքական ենթատեքստ է տեսնում հարձակման մեջ», http://www.pinkarmenia.org/hy/2018/08/political-shurnukh1/
«Epress. am», «Մտածում էինք, որ չենք ապրի էլ. Սյունիքում ոստիկանների թողտվությամբ հարձակվել են երիտասարդների վրա», http://epress.am/?p=286500
https://web.facebook.com/pinkarmenia/videos/10156658122500238/
https://web.facebook.com/pinkarmenia/videos/10156658132705238/
https://web.facebook.com/elvira.meliksetyan/videos/2123087547704364/
https://web.facebook.com/elvira.meliksetyan/videos/2123192924360493/
https://web.facebook.com/elvira.meliksetyan/videos/2123625540983898/
https://web.facebook.com/elvira.meliksetyan/videos/2123934387619680/
https://web.facebook.com/photo.php?fbid=1789684201112714&set=a.483021048445709
«Epress. am», «Մտածում էինք, որ չենք ապրի էլ. Սյունիքում ոստիկանների թողտվությամբ հարձակվել են երիտասարդների վրա». http://epress.am/?p=286500
«Epress. am», «Շուռնուխի բռնությունների և դրանց ենթատեքստի մասին» https://youtu.be/92PjeeaR5hg
«CivilNet.am», «Շուռնուխ. քաղաքական նպատակներ՝ բռնության հետևում» https://youtu.be/BCOHKpyVVTY
«Ազատություն», «Մեր կյանքին վտանգ է սպառնում». Շուռնուխի դեպքերից ծեծված երիտասարդներ». https://youtu.be/wZfGhtM6nEU

Պետական պաշտոնյաներ

ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Պետրոսյանի արտահայտած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [50] ՝

- դուրս մղել համասեռամոլներին
- երկրի անվտանգությանը սպառնացող ամենավտանգավոր երևույթներից մեկը
- մեր արժեհամակարգը կործանող
- անճարներ
- չգոյություն

Գևորգ Պետրոսյան
August 7, 2018 ·

Մենք հայրենիք ենք կորցնում

Տեղեկացա, որ ինչ-որ անհայտ ծագմամբ «Փինք Արմենիա» անվանումով հասարակական կազմակերպություն դիմել է ՀՀ ոստիկանություն համասեռամոլության դեմ արտահայտածս կարծիքի համար ինձ պատասխանատվության ենթարկելու պահանջով...
Նախ, գնահատական կարող է տալ դատարանը, հետո պետք է կարդալ նաև Սահմանադրության 96-րդ հոդվածը... Բայց դա մի կողմ...
Ժողովուրդ, Հայրենիք ենք կորցնում...
Ուրիշ ոչինչ չունեմ ասելու)))...

631 113 Comments 72 Shares

Like Share

Գևորգ Պետրոսյան
September 8, 2018 ·

«Երկրում բան ա փոխվել» շարքից...

Ոչ հեռավոր անցյալում մեր երկրի անվտանգությանը սպառնացող ամենավտանգավոր երևույթներից մեկի՝ շեղված սեռակողմնորոշման մասին խոսելիս շատերի ձայնը բարձր էր, հնչեղ ու համոզիչ...
Հիմա ինչ-որ երկյուղածություն, անգամ վախ է նկատվում....
Ինչու, ինչ՞ պատահեց...
Ինչից՞ ենք վախենում...
Բացեիբաց հայտարարվում է համայն հայության սրտում՝ Երևանում անցկացվելիք համասեռամոլների լայնամասշտաբ հավաքի անցկացման մասին, և առ այսօր ոչ մի պետական բարձրաստիճան պետական պաշտոնյա հրապարակային գնահատական չի տվել այդ ամենին...
Բա ոնց՞ չասես՝ մի վախեցեք ընկերներ, երկու վախը մեկ մահ է...

159 7 Comments 13 Shares

Like Share

[50] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=310130106221150&id=100016724891018
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=310506276183533&id=100016724891018
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=311215072779320&id=100016724891018
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=333822630518564&id=100016724891018

ՀՀ ԱԺ ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովի արտահայտած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [51]՝

- **համասեռամոլներ, համասեռամոլների քարոզ, համասեռամոլության քարոզն արգելող օրենք**
- **հոգևոր մարտահրավերներ**
- **ազգային արժեքներին, ինքնության պահպանման լուրջ վտանգ**
- **անառողջ և վտանգավոր քարոզ:**

Պետական պաշտոնյաներն իրենց ատելության խոսքերը՝ ներառյալ բռնության և խտրական վերաբերմունքի կոչերը հետևյալ կերպ են հիմնավորում (առանց էական խմբագրման և դասակարգման).

Գ. Պետրոսյանի կարծիքով նույնասեռականներին պետք է վտարել, քանի որ՝

- **Հայաստանը «սուրբ հող է»,**
- **«մենք հայրենիք ենք կորցնում»,**
- **«ամենավտանգավոր երևույթներից մեկն է, որը սպառնում է երկրի անվտանգությանը»:**

Էդուարդ Շարմազանովի պնդմամբ պետք է օրենքով արգելել նույնասեռականության «քարոզը», քանի որ՝

- **այն «հոգևոր մարտահրավեր է»,**
- **«լուրջ վտանգ է սպառնում ազգային արժեքներին, ինքնության պահպանմանը»,**
- **պետք է «ամրապնդել և պաշտպանել մեր ազգային-քրիստոնեական և ավանդական արժեքները»,**
- **պետք է պայքարել «երեխայի հոգևոր առողջության դեմ իրականացվող քարոզ»-ի դեմ,**
- **«չի կարող անտարբեր մնալ անառողջ և վտանգավոր քարոզի հանդեպ»:**

Նախ և առաջ, պետք է նշել, որ պետական կառավարման մարմիններից և դրանց ներկայացուցիչներից շատ քչերն են սույն դեպքի վերաբերյալ դատապարտող *պաշտոնական դիրքորոշմամբ հանդես եկել*: Իսկ պետական մակարդակով ոչ պատշաճ վերաբերմունքը հանգեցնում է ԼԳԲՏ անձանց իրավիճակի հետագա վատթարացմանը:

Մի քանի պետական գործիչներ լրատվամիջոցներին տված հարցազրույցներում և ֆեյսբուքյան գրառումներով անդրադարձել են խնդրին՝ դատապարտելով բռնությունը: Հատկանշական է այն, որ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ, դեպքի վերաբերյալ հարցին անդրադառնալիս, ընդհանուր առմամբ դատապարտել է բռնությունը՝ համարելով, որ այն խնդրի լուծման միջոց չէ[52]:

Սակայն շատ պետական/քաղաքական գործիչներ արդարացրել են նույնասեռականների դեմ բռնությունը: ՀՀ ԱԺ ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովը նույնասեռականության «քարոզն» արգելող օրենսդրական նախաձեռնությանը սատարելու հայտարարություն է կատարել, որը երկրում նույնասեռական անձանց նկատմամբ անհանդուրժողականության ու ատելության մթնոլորտի կրկնապատկման առիթ է տալիս:

Միանգամայն կարող ենք եզրակացնել, որ վերջինս ուղղակիորեն «իրավական հիմք» կարող է լինել շատ մեծ ազգայնական, խիստ ավանդապաշտական և հավատացյալ զանգվածի կողմից՝ ԼԳԲՏ համայնքի նկատմամբ ատելությունից կամ անհանդուրժողականությունից

[51] *http://henaran.am/382667.html ; https://iravunk.com/news/65400*

[52] *«Ազատություն», «Ֆեյսբուքյան ասուլիս» փոխվարչապետ Տիգրան Ավինյանի հետ /սկսած՝ 29:17վրկ/. https://youtu.be/KQi47fXBgUQ*

բխող իրական ագրեսիվ, բռնի գործողությունների դիմելուն: Իսկ ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Պետրոսյանն, ընդհանրապես, հանդես է եկել նույնասեռականներին Հայաստանից վտարելու կոչով:

Իսկ ինչո՞ւ է այդպես արվում: Մի շարք տեսակետներ կան, որ քաղաքական գործիչներն ատելության խոսքեր են օգտագործում իրենց շուրջ հանրային հետաքրքրություն առաջացնելու նպատակով: Մասնավորապես դա արվում է՝ հակադրվելու քաղաքական հակառակորդներին կամ ավելի շատ աջակցություն ստանալու ընտրողների շրջանում, որոնք իրենց տեսակետները սատարում են, կամ նվաստացնելով անձանց՝ քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար կամ ուշադրության հրավիրելու նրան, որ քաղաքական հակառակորդները «սխալ» են գործում, կամ մեկուսացնելու այն մարդկանց, որոնք տարբեր են, կամ էլ սոցիալական խնդիրներին ուշադրություն հրավիրելու համար[53]:

Իսկ, քանի որ Հայաստանում ԼԳԲՏ անձինք հասարակության մեծամասնության կողմից անընդունելի են, առկա է անհանդուրժողականության մեծ մթնոլորտ, կարող ենք նաև ենթադրել, որ հետհեղափոխական Հայաստանում, նախընտրական շրջանում կառավարության հակառակորդ քաղաքական ուժերի կողմից ԼԳԲՏ թեմաների բարձրացումն օգտագործվում է որպես մանիպուլյացիոն գործիքներ՝ ընտրազանգված հավաքելու համար:

Հատկանշական է, որ ԵԱՀԿ Նախարարների խորհուրդն իր որոշումներում ամրագրում է այն փաստը, որ պետական պաշտոնյաները, քաղաքական գործիչներն ունեն թե՛ դրական, թե՛ բացասական դեր երկրում խտրականության և անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծման կամ դրա վերացման գործում:

Այսպես, Նախարարների խորհրդի թիվ 13/06 որոշմամբ ամրագրված է, որ Նախարարների խորհուրդն «ընդգծելով, որ քաղաքացիական հասարակությունը կարևոր դեր կարող է խաղալ անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարում, ինչպես նաև խթանել փոխադարձ հարգանքն ու փոխըմբռնումը (...) [միաժամանակ] ափսոսանք հայտնելով ռասիստական, քսենոֆոբ և խտրական հանրային ելույթներով, շեշտում է, որ քաղաքական գործիչները կարող են դրական դեր խաղալ փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման համընդհանուր խթանման համար, զգալի ազդեցություն ունենալ հասարակություններում լարվածության վերացման գործում՝ խոսելով ատելության դրդապատճառների և միջադեպերի դեմ...»[54]:

Իսկ թիվ 10/07 որոշմամբ ամրագրված է, որ Նախարարների խորհուրդը «ճանաչելով, որ անհանդուրժողականության և խտրականության դրսևորումները կարող են խոչընդոտել անհատների իրավունքները պաշտպանելու ջանքերը, կոչ է անում քաղաքական գործիչներին, այդ թվում՝ խորհրդարանականներին, շարունակել ջանքերը խստորեն մերժելու և դատապարտելու ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի, անհանդուրժողականության և խտրականության դրսևորումները, ներառյալ ծայրահեղականության բռնի դրսևորումները՝ կապված ագրեսիվ ազգայնականությամբ և նեո-նացիզմով, միաժամանակ, շարունակելով հարգել արտահայտվելու ազատությունը»[55]:

Այսինքն, այս դեպքում, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ Ազգային ժողովի որոշ պաշտոնյաներ բացասական, խտրական, ատելություն, թշնամանք պարունակող խոսքերով հակառակ ազդեցությունն են գործում՝ ավելի տարածելով

[53] https://bit.ly/2JDnlWN
[54] https://www.osce.org/atu/23706?download=true
[55] https://www.osce.org/mc/29452?download=true

անհանդուրժողականության մթնոլորտը ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Այդ պատճառով պետական պաշտոնյաները պետք է զերծ մնան ատելության խոսքերից ու այնպիսի հայտարարություններից, որոնք կարող են խթանել խտրականությունն ու անհավասարությունը: Բացի այդ, խորհրդարանականներն ու քաղաքական կուսակցությունները պետք է ընդունեն էթիկայի կանոնագրքեր ու հակախտրական քաղաքականություններ իրենց անդամների համար [56]:

ՌԱԵՀ-ն ատելություն սերմանող խոսքը համարում է հատկապես մտահոգիչ, քանի որ դա փաստացի բռնության հանգեցնող առաջին քայլն է, որը տեղի է ունենում ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Այս առումով պետք է նշել, որ ՌԱԵՀ-ը դեռևս 2016թ-ի Հայաստանին վերաբերող իր զեկույցում նշել է, որ պատգամավորների հնչեցրած անհանդուրժողական հայտարարությունները, մասնավորապես ԼԳԲՏ համայնքի դեմ, խնդիր է:

ՌԱԵՀ-ը համարում է, որ չնայած պատգամավորների համար նախատեսված էթիկայի կանոնագրքի առկայությանը՝ այն չի կիրառվում ռասիստական կամ հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի միջադեպերում ներգրավված պատգամավորներին կարգի հրավիրելու համար:

Ինքնակարգավորումը կարող է արդյունավետ պատասխան ապահովել նման միջադեպերի հետ կապված: Հերքումը կարող է դիտարկվել որպես լրացուցիչ արձագանք: Ընդհանուր առմամբ, ՌԱԵՀ-ը մտահոգ է ատելություն սերմանող խոսքին արձագանքման բնավ բացակայության հետ կապված, ինչը լայն հասարակության կողմից կարող է ընկալվել որպես այս խոցելի խմբերի և, մասնավորապես, ԼԳԲՏ համայնքի խարանման պարզունակում:

ՌԱԵՀ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանությունները հրապարակային հայտարարություն անեն՝ դատապարտելով հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքը և բռնությունները: Այն նաև առաջարկում է, որ քաղաքական կուսակցությունները կոշտ դիրքորոշում որդեգրեն հոմոֆոբ/տրանսֆոբ տրամադրությունների դեմ, հատկապես, երբ դրանում ներգրավված են իրենց անդամները[57]:

Հասարակական միավորումներ

Ինչ վերաբերում է ոչ պետական մարմիններին, ապա, հիմնականում ներպետական և սփյուռքահայ իրավապաշտպան կազմակերպությունները, հասարակական միավորումները, նույնպես դատապարտել են կատարված բռնությունը՝ կոչ անելով պետությանն ու համապատասխան մարմիններին գործուն քայլեր ձեռնարկել երկրում խտրականության բացառումն ու յուրաքանչյուրի իրավահավասարությունն ապահովելու համար[58]:

Իսկ որոշ ավանդապաշտ և կրոնապաշտ հասարակական միավորումներ և նախաձեռնություններ հանդես են եկել խտրականություն տարածող օրենսդրական նախաձեռնություններով, որը հող է նախապատրաստում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնությունների կիրառման համար:

Մասնավորապես, «Քրիստոնեական արժեհամակարգի և ավանդական

[56] *https://bit.ly/2vUaCH6*
[57] *https://rm.coe.int/fourth-report-on-armenia-armenian-translation-/16808b5538*
[58] *https://web.facebook.com/EPFArmenia/posts/2490963897584236*
http://www.havasar.am/declaration/
https://medium.com/@armenianproject; article on Aug 19, 2018

ընտանիքի պաշտպանության» նախաձեռնությունը՝ համակարգող Հայկ Նահապետյանի ղեկավարությամբ, պնդում է, որ օրենսդրորեն պետք է արգելել նույնասեռականությունը, քանի որ՝ դրանով «հայ ժողովրդի քրիստոնեական արժեքներին, աշխարհաճանաչողությանն ու աշխարհընկալմանը, ավանդական ընտանեկան արժեքներին մարտահրավերներ են նետված, որոնց մի մասն այլևս լրջագույն սպառնալիքներ են»[59]:

Ըստ հասարակական կազմակերպությունների ՀՀ օրենքի՝ հասարակական միավորումների գործունեության սկզբունքներն են՝օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը[b]
Reshot

Կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ

Տարբեր լրատվամիջոցներին տված հարցազրույցներում Հայ-առաքելական եկեղեցու մի շարք հոգևորականներ նույնպես խտրական, վիրավորող, ատելություն, թշնամանք սերմանող խոսքեր են արտահայտել այդ անձանց նկատմամբ, և ընդհանրապես, նույնասեռականության վերաբերյալ:

Մասնավորապես, Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի արտահայտած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտություններ են [60]՝

- ***սեռական սանձարձակություն***
- ***ալտերնատիվ, սեռականության դրսևորում***
- ***սոդոմականության ախտ շնացողներ***
- ***պոռնիկներ***
- ***արվամոլներ***
- ***իգացողներ***
- ***ախտ***
- ***արատ***
- ***մեղք***
- ***հոգևոր շեղում:***

[59] *«Iravunk.com», «Լուրջ վտանգ են սպառնում մեր ազգային արժեքներին, ինքնության պահպանմանը». Է. Շարմազանով». https://iravunk.com/news/65400*
[60] *«Շողակաթ» ՀԸ, «Շուռնուխի դեպքին անդրադարձել է Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը». https://youtu.be/P2q_w1ZooRU*

Տեր Եսայի քահանա Արթենյանի արտահայտած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [61] ՝

- ***մեղք***
- ***պղծություն:***

Տեր Եփրեմ քահանա Հարությունի արտահայտած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները[62] ՝ ***մաքրել այլասերվածներից:***

Կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց առավել հաճախ հնչեցրած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները հետևյալ կերպ են հիմնավորում (առանց էական խմբագրման և դասակարգման):

Տեր Արարատ քահանա Պողոսյանը համոզմամբ «միասեռականությունը» դատապարտելի է, քանի որ՝

- ***այն «ոտնձգություն է ավանդական ընտանիքի, ազգային արժեքի նկատմամբ»,***
- ***իսկ շուռնուխցիների գործողությունները «ինքնապաշտպանություն է զավակի, հավատքի, հայրենիքի, ավանդականի, ազգային-եկեղեցական արժեքների համար»,***
- ***և պետք է «պաշտպանել ավանդականը, հավատքը, եկեղեցին, հայրենիքը, ազգային-եկեղեցական մշակույթը»[63]:***

Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը պնդմամբ նույնասեռականությունը դատապարտելի է, քանի որ՝

- ***այն «սեռական սանձարձակություն է, ալտերնատիվ, սեռականության դրսևորում է, սոդոմականության ախտ է, ախտ է, արատ է, հոգևոր շեղում է»,***
- ***«շնացողները, պոռնիկները, արվամոլները, իգացողները երկնքի արքայություն չեն տեսնի»,***
- ***«քրիստոնյա առաջին երկրում, քրիստոնեական արժեքներ, բարոյականություն դավանող երկրում չի կարող տեղ գտնել այսպիսի երևույթներ»,***
- ***«վտանգավոր է ազգային անվտանգության տեսանկյունից»:***

Տեր Եսայի քահանա Արթենյանի կարծիքով նույնասեռականությունը դատապարտելի է, քանի որ՝ ***այն «մեղք է, պղծություն է»:***

Հայաստանում տիրում է կրոնականության բարձր մակարդակ և կրոնական համայնքը շատ կարևոր ազդեցություն ունի հասարակությունում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի ձևավորման գործում: Ինչպես նկատեցինք, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներն ունեն չափազանց բացասական դիրքորոշում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ, ուստի պարզ է դառնում, որ հասարակության գերակշիռ շրջանում ստեղծվում է անհանդուրժողականություն ու թշնամանք ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Սույն փաստը հիմնավորվում է ոչ միայն վերոնշյալ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների խոսքերով, վերաբերմունքով, այլև նախկինում կատարված հետազոտության արդյունքներով, որոնցով չափվել էին հայ հասարակության արժեքային կողմնորոշումները: Մասնավորապես, դեռևս 2016թ-ին Հայաստանում արձանագրվել էր կրոնական արմատականության հակվածության բարձր աստիճան, որի ցուցանիշը թույլ էր տվել եզրակացնել, որ հարցվածների շրջանում գերիշխում է միակ աստվածային ճշմարիտի մասին

[61] *«News.am», «Փոքրամասնությունն է ճնշում մեծամասնությանը. հոգևորականը՝ Շուռնուխի դեպքերի մասին». https://news.am/arm/news/466313.html*

[62] *https://www.facebook.com/gevorg.harutyunyan1/posts/1783060465103258*

[63] *«Շողակաթ» ՀԸ, «Շուռնուխի դեպքին անդրադարձել է Տեր Արարատ քահանա Պողոսյանը» (սկսած՝ 1:14 րոպեից), https://youtu.be/lZoowHPTdhE*

համոզմունքները, ինչպես նաև այլ սոցիալական խմբերի նկատմամբ խտրական դիրքորոշման առկայությունը: Կրոնական արմատականության հիմքում ևս ընկած է կրոնական «ճշմարիտին» և այն հաղորդողներին հարգելու և հետևելու մասին[64]:

Իսկ ի՞նչ է դա նշանակում: Միանշանակ կարող ենք եզրակացնել, որ հայ հասարակության մեծամասնությունը, հիմնվելով եկեղեցու, կրոնական կազմակերպության ներկայացուցիչների՝ որպես հեղինակությունների, խոսքերի վրա, նույնպես բացասական վերաբերմունք կտածեն ԼԳԲՏ անձանց նկատմամբ, որն այս դեպքում արտահայտվել էր 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ: Ենթադրելի է, որ Հայաստանի բնակչության մեծամասնության համար, որի 90%-ից ավելին Հայ-առաքելական եկեղեցու հետևորդներ են[65], կրոնական կազմակերպության ներկայացուցիչների խոսքերն, արված հայտարարությունները ազդեցիկ նշանակություն կարող են ունենալ մարդկանց կարծիքի, դիրքորոշման, վերաբերմունքի ձևավորման գործում: Իսկ նրանք ԼԳԲՏ հարցերի, թեմաների մասին խոսելիս, ներկայացնելու են այնպես, ինչպես իրենք գիտեն՝ կրոնական, քրիստոնեական արժեքայնության ասպեկտում կամ ինչպես տեղյակ են կամ ինչպես իրենք են պատկերացում: Շատ հավանական է, որ մեծ թվով մարդիկ, պարզապես հետևելու են նրանց խոսքերին: Բնականաբար, պարզ է դառնում նաև, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ, այդ թվում՝ դեպքի առնչությամբ այդպիսի ատելության խոսքեր արտահայտելիս, խտրական վերաբերմունք դրսևորելիս, բացասական պատկերացում, դիրքորոշում, վերաբերմունք է առաջանալու հասարակության մեծամասնության շրջանում:

Բայց ինչու՞ է դա իրականացվում. Կան տեսակետներ, համաձայն որոնց, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները շատ հաճախ կարող են հնչեցնեն ատելության խոսքեր, որպեսզի արտահայտեն և տարածեն իրենց հավատը: Որոշ ավանդական կամ ուղղափառ կրոնական հավատացյալներ, ինչպես, օրինակ, քրիստոնյաներն են կամ մահմեդականները, երբեմն իրենց լեզվական ծայրահեղական գործածումը՝ կապված սեռական կողմնորոշման հետ, արդարացնում են նրանով, որ այն իրենց կրոնական ազատության մի մասն է: Սակայն պետք է արձանագրենք, որ կրոնական ազատությունը պետք է ինքնին դիտարկվի որպես ազատության մի ասպեկտ, բայց ոչ գերակայություն: Մյուս կողմից էլ պետք է նշել, որ գերակա չլինելը չի նշանակում

Հայ եկեղեցին նշում է սրբոց Ղևոնդյանց քահանաների հիշատակության օրը, փետրվար 2018 aragatsotni-tem

չմիջամտել[66]: Ուստի այստեղ ևս մենք հանդիպում ենք կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների արտահայտած խոսքերի՝ որպես խոսքի ազատության, կրոնական ազատության սահմանափակման համաչափությանը: Բայց, հաշվի առնելով հասարակության արձագանքը, պարզ է դառնում, որ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների ատելության խոսքերը վտանգավոր դեր են ունենում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունք և դիրքորոշում կազմելու հարցում: Պետք է նշել, որ նրանք ունեն ուժեղ պոտենցիալ ազդելու այն մարդկանց կյանքի ու վարքագծի վրա, որոնք հետևում են իրենց հավատքին ու կիսում են իրենց հավատալիքները: Երբ նրանք խոսում են, նրանց «ուղերձները» կարող են ուժեղ և լայնածավալ ազդեցություն ունենալ[67]: Ուստի, այսպիսի հարցերում կրոնական կազմակերպության ներկայացուցիչները պետք է չափազանց հավասարակշռված մոտեցում ցուցաբերեն:

Սակայն նրանք ունեն ոչ միայն բացասական ազդեցություն, այլև կարող են ունենալ դրական ազդեցություն, եթե ուղղված լինեն տարածելու հանդուրժողականություն և կանխելու բռնությունները: Կրոնական առաջնորդների գործողությունների պլանում իրավացիորեն նշվում է, որ կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժողական արտահայտություններից, որոնք կարող են հրահրել բռնության գործադրում, թշնամանք կամ խտրականություն, սակայն նրանք նույնպես կարևոր դեր ունեն այն բանում, որ կարող են հաստատակամ և օպերատիվ հանդես գալ անհանդուրժողականության, խտրական կարծրատիպերի և ատելության խոսքերի դեպքերի դեմ [68]:

Զանգվածային լրատվության միջոցներ

Հայկական լրատվամիջոցներում Շուռնուխի բռնության դեպքը բուռն արձագանք է ստացել: Սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվել են բազմաթիվ նյութեր, որոնց մեծամասնությունում առկա են եղել ատելություն սերմանող, անհանդուրժողականություն տարածող վերնագրեր ու բովանդակություն:

Մասնավորապես «Hraparak.am» կայքում հրապարակված հետևյալ վերնագրերով նյութերում օգտագործված ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [69]՝ ***համասեռամոլներ:***

«Haydzayn.am» կայքում հրապարակված հետևյալ վերնագրերով նյութերում օգտագործված ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [70]՝

- ***«Նրանք հարձակվեցին մեզ վրա, ասելով՝ փչացածներ, բոմժեր, դուք էլ պետք է մեզ նման դառնաք. Շուռնուխի բնակչուհու պատմածը լգբտ-ների՝ գյուղ ներխուժման մասին»***
- ***«Չի կարող լինել միասեռականության քարոզի հանդեպ հանդուրժողականություն»:***

«Armeniasputnik.am» կայքում հրապարակված հետևյալ վերնագրերով նյութերում օգտագործված ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [71]՝

- ***«Հեռացե՛ք, համասեռամոլներ».***

---

[64] *http://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf*
[65] *https://www.armstat.am/file/article/demog_2018_8.pdf*
[66] *https://orca.cf.ac.uk/96402/2/Bonotti%20Religion%20Hate%20Speech%20and%20Non-Domination.pdf*
[67,68] *https://www.un.org/en/genocideprevention/documents/Plan%20of%20Action%20Advanced%20Copy.pdf*
[69] *https://bit.ly/2vXqkRS*
[70] *https://bit.ly/2Hj5mDu*
[71] *https://bit.ly/2WINYgG*

- ***Շուռնուխի դեպքի առնչությամբ Ոստիկանության պարզաբանումը»***
- ***«Շնագայլային ձայներ», խմբակային լոգանք. ամեն ինչ արել են Շուռնուխում ծեծ ուտելու համար»:***

«Blognews.am» կայքում հրապարակված հետևյալ վերնագրերով նյութերում և/կամ դրանց վերնագրերում օգտագործված ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [72]՝

- ***«Բացատրեք Շուռնուխ գյուղ ԼԳԲՏ դեսանտ իջեցնելու իմաստը»***
- ***«Այս տղան «կարճ» ժամանակում սովորական գյուղացուց դարձավ «առաջադեմ լգտբ ակտիվիստ»»***
- ***«Գեյերի ու լեսբուհիների համար մեկ թշնամին իրենց իրավունքների համար պայքարը բիզնես սարքած ակտիվիստներն ու ՀԿ-ներն են»:***

«Iravunk.com» կայքում հրապարակված հետևյալ վերնագրերով նյութերում օգտագործված ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները [73]՝

- ***««Գիշերվա ժամը՝ 3-ին, մոմերը վառել, շակալի ձայներ են հանել, պարզ է, որ ժողովուրդը կվրդովվեր». Շուռնուխի գյուղապետ»»***
- ***««Կեցցե՛ շուռնուխցի հայ կինը». Կարինե Հայրապետյան»»***
- ***«Երբ բռնության ենթարկվեց Ամենայն հայոց կաթողիկոսը ինչո՞ւ չմտահոգվեցիք ու չարձագանքեցիք, հարգարժան դիվանագետներ»***
- ***«Կառավարության կադրերը այլասերվածության պաշտպա՞ն»***
- ***««Եթե երեխեքի մասին մտածում ես, էդ անբարոյականներին ինչի՞ ես բերել գյուղ». Շուռնուխի միջադեպի հետքերով»»***
- ***««Հեռո՛ւ պահեք ձեր ազդեցությունը այս սուրբ ժողովրդից». մտավորականի պատասխանը Սերժ Թանկյանին»»***
- ***«Ինչպես են շուռնուխցի դեռահասները պաշտպանել իրենց գյուղի եւ ծնողների պատիվը (Տեսանյութ)»***
- ***«ԼԳԲՏ-ները զարգացնում են գրոհը. բաց նամակ կառավարությանը»:***

Ինչպես նկատեցինք ՁԼՄ-ներում և սոցիալական ցանցերում բավականին մեծ հնչեղություն է ձեռք բերել Շուռնուխի դեպքը[74]: Սակայն պարզ է, որ մեդիայում առկա էին ատելության և անհանդուրժողականության տարածման մեծ առկայություն: Հասկանալի է, որ ՁԼՄ-ները պետք է ճանաչեն, որ նրանք ունեն բարոյական և սոցիալական պատասխանատվություն հավասարության խթանման գործում [75]: Ինչպես նաև հայտնի է, որ լրատվամիջոցները կարող են նպաստել հանդուրժողականության և միջմշակութային փոխըմբռնման խթանմանը, փոքրամասնությունների բացասական կարծրատիպերի և բացասական պատկերացումների վերացմանը[76]: Սակայն փաստը մնում է այն, որ հայկական էլեկտրոնային մամուլում շարունակվում են ուղղակիորեն տարածվել ատելության խոսքեր: Վերջինս հիմնավորվում է նրանով, որ ՁԼՄ-ներն օգտագործում են այնպիսի բառեր կամ արտահայտություններ, որոնք պարունակում են վիրավորանք, բռնության կոչեր, նսեմացնող, թշնամանք սերմանող արտահայտություններ ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Բնականաբար, հասկանալի է, որ յուրաքանչյուր լրատվամիջոց փորձում է ավելի մեծ լսարան հավաքել կամ ավելացնել դիտումների քանակը, սակայն արդո՞ք նրանց քայլերը չեն վնասում պաշտպանված հատկանիշներով անհատի կամ մի խումբ մարդկանց կամ ոտնահարում այլոց հիմնարար իրավունքներն ու ազատությունները կամ, ընդհանրապես, խաթարում

հասարակական կարգը:

Պարզ է, որ վերջինս պայմանավորված է նաև հեղինակի կամ խմբագրի լրագրողական էթիկայի տիրապետմամբ, իրավագիտակցության պատշաճ մակարդակի և այլ հանգամանքների առկայությամբ: Այստեղ ևս մենք գործ ենք ունենում արտահայտման ազատության իրավունքի լիարժեք իրացման և դրա սահմանափակման իրավաչափության սահմանների հետ: Հաշվի առնելով ԶԼՄ-երի դերն այն հարցում, թե ինչպիսի հետևանքներ կարող են ունենալ նրանց հրապարակումները, պետք է անդրադառնալ Նախարարների կոմիտեի թիվ 97(20) հանձնարարականին: Համաձայն որի, պարզ է դառնում, որ լրատվամիջոցները նույնպես պետք է պայքարեն այն բոլոր արտահայտման ձևերի դեմ, որոնք խրախուսում են ռասսայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը, և մնացած բոլոր անհանդուրժողականության ձևերը, քանի որ դրանք խաթարում են ժողովրդավարական անվտանգությունը, մշակութային միասնությունն ու բազմակարծությունը:

Այն նաև ճանաչում, ինչպես նաև ուշադրության է հրավիրում մի շարք այնպիսի կենտրոնական պարադոքսների, ինչպիսին է օրինակ, ԶԼՄ-ների միջոցով արտահայտման նման ձևերի տարածումը, որը կարող է հանգեցնել «ավելի մեծ և ավելի վնասակար ազդեցություն ունենալուն», միևնույն ժամանակ նշելով, որ անհրաժեշտություն կա «հարգել լրատվամիջոցների խմբագրական անկախությունն ու ինքնավարությունը»[77]:

Սակայն փորձը ցույց է տալիս, և, ըստ այդմ, կարող ենք նաև ենթադրել, որ նախընտրական շրջանում որոշ կուսակցություններ փորձում են քաղաքական նպատակներով շահարկել ԼԳԲՏ թեմաներն իրենց ընդդիմադիրներին հակառակվելու կամ հասարակության մեծամասնությանը «սիրաշահելու» նպատակով:

Այդ պատճառով օգտագործվում են ԶԼՄ-ները կամ սոցիալական ցանցերը, քանի որ վերջիններս լրատվության տարածման ամենամեծ և արագ միջոցներից են:

Այս առումով պետք է փաստել, որ ՌԱԵՀ-ը 2016թ.-ի Հայաստանին վերաբերող իր զեկույցում արդեն իսկ հայտնել է իր մտահոգությունն այն բանում, որ հայկական լրատվամիջոցներում առկա են ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելություն սերմանող խոսքեր: Վերջինս նշել է, որ անհրաժեշտ է լրատվական էթիկայի կանոնագիրք, որը կներառի ռասիստական և հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքի դեմ հստակ դրույթներ[78]:

Հասարակություն

Հասարակության գերակշիռ մեծամասնությունը խիստ անհանդուրժող վերաբերմունք, ատելություն, թշնամանք, խտրականություն պարունակող խոսքեր է արտահայտել ինչպես 9 երիտասարդների, այնպես էլ ողջ ԼԳԲՏ համայնքի նկատմամբ, հատկապես շեշտադրելով նույնասեռականության չափազանց բացասականությունը: Մասնավորապես, հասարակության կողմից առավել հաճախ հնչեցրած ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները, վիրավորանքները, հայհոյանքները ԼԳԲՏ անձանց, նույնասեռականություն երևույթի նկատմամբ[79] (առանց էական խմբագրման և դասակարգման):

համասեռամոլներ	սոդոմիստներ, սոդոմ-հոմորա գարշապաշտեր
այլասերվածներ	ախտ, սոցիալական ախտեր
գոմիկներ	ապազգային հայատյաց ծրագրեր ու երևույթներ
սանձարձակություն	անասուններ, աննամուս անասուններ
զզվելի ու արտաքսելի	անկրոն, անաստված մարդիկ
պիղծ, սրբապիղծ, անբնական ու զզվելի պղծություն, պղծասիրություն	բնական շեղումներ, այլ վարքագիծ և սեռային հակում
շեղում, հոգևոր և բարոյական դաստիարակության շեղումներ	ցինիկ լպիրշություն
անբարոյականություն	գարշահոտ
մոլախոտներ	պիղծ արյուն
ողբերգություն	պոռնիկ արվամոլներ, պոռնիկ հայորդիներ
շնածնական այլանդակ վարք	գեյեր
լրբածնական սորոսյան ոհմակներ	տարօրինակ արարածներ
նեխած նեռ	անբնական նեխած մարդանման լեշեր
ամոթ ու չափ կորցրած	աղբ, պոռնո աղբ
ապականություն	չմարդ
հակամարդկային ծրագիր	զիբիլներ
համասեռամոլներ	վիրուս
այլասերվածներ	չար ու չաթլախ
ավելի վատ, քան թուրք ենիչերը կամ ֆաշիստը կամ մուսուլմանը կամ աղանդավորը	տականքներ
կործանված սերունդ	բնության դեմ հանցանք
եվրոպական պոռնկություն	հանցագործություն մարդկության հանդեպ
այլասերված, անբնական, մարդակերպ արարածներ	հիվանդություն
այլանդակություն	գյոթեր
բոզ, բոզի լակոտներ	պիդառածներ
պեդոֆիլ	և այլն:

Նշենք մի շարք օրինակներ, որոնք վերցված են համացանցից:

Aghasi Rubenyan 2 месяца назад
կախել է պետք
4 ОТВЕТИТЬ

ՁԱՆԳԻՎ ՁՐՄԼԳԻ 2 месяца назад
Հայ ազգը պետք է մաքուր ապրի. Ինչո՞ւ են այս մի քանի թափթփուկներ ցեխ շպրտում հայկական մենթալիտետի վրա .Հայաստանում անխտիր պետք է վերացնել գեյերին ու լեզբերին. Սա հանճարակ է հայ ազգի դեմ.
11 ОТВЕТИТЬ

своими руками 2 месяца назад
Es agarken ova?? Tunt ccsnem! Baleqit qunem!!!!
2 ОТВЕТИТЬ

Ali Habib 2 месяца назад
Kich en cecel! Ed axmkel-chaxmkel@ errordakan harcer en... Ed tunn el pti varein myusnerin das liner....
18 ОТВЕТИТЬ

Эдгар Авагян 2 месяца назад
Ha ba!!! Dranc miayn etpes piti veracnen HAYASTANIC
2 ОТВЕТИТЬ

Xachik Simonyan 2 месяца назад
Մամաներիդ պետքա քունեին
2 ОТВЕТИТЬ

ԱՐՑԱԽ 1992 2 месяца назад
Լուիզա Վարդանյան, ձենդ կտրի ու վեր ընկի տեղը:Երևի դրանցից մեկն էլ դու ես:
23 ОТВЕТИТЬ

Гарегин Нжде 2 месяца назад (изменено)
կլիրս ծծես այ լիռվ այ բոզի վստակ դե եթե այդքան դուխով ես գնա գնա քո միսեռականությունը թուրքիա կամ ադրբեջան քարոզի քաաանեմ ես քո լավտ ես էր խա այդպես կոչված թավշյա հեղափոխության պլանը որ հայաստանի ամեն անկյունում գոմիկպլան քարոզեք ես ձեր լավը արա դրանց լարեկա պետք երկրից դրանք սեռոժից ել քոչարյանից ել բեթար են
ОТВЕТИТЬ

Artur Baks 2 месяца назад
Տո լավեն արել: Ես դրանց հիվանդ մասան: Վաբշե սասաղին պիտի սատկացնեն
ОТВЕТИТЬ

Kristine Vaughn 2 месяца назад
Ամոթը ձեզ, այլասերված տականքներ: Արևմուտքի փողերի համար ազգի երեխեքին եք ապականում: Գետինը մտնեք, հասել եք արդեն գյուղեր: Մեծ-մեծ խոսում եք, բայց մի օր կա, որ բոլոր ձեր արածների ու չարածների համար շատ դառը պատասխան եք տալու Աստծուն:
ОТВЕТИТЬ

SunRise 2 месяца назад
Լավ են արել ջարդել են, մի հատ էլ պտի ջարդեն ու ռեժիմով, մինչեվ որ վերանան:
ОТВЕТИТЬ

ԱՐՑԱԽ 1992 2 месяца назад (изменено)
Ինչի եք եդ բոզի լակոտներին բաց թողել, ինչի չեք սատկացրել: Որտեղ դրանց նմաններին հանդիպեք, անմիջապես ոչնչացրեք:ԿԵՏՑԵՔ Շուռնուխցիներ, հալալա ձեր կերած հացը:
67 ОТВЕТИТЬ

Vahan Asatryan 2 месяца назад
տո ծեծեիլու փոխարեն պտի դռները փակեին ու բենզինով սաղին վառեին էտ պոռնիկածին մայր կոչեցյալին պտի քարերով սատկացնել : որտեղ այլասեռվածները իրենց կոնկրետ չպահեն տեղն ու տեղը սատկացնելա պետք :
16 ОТВЕТИТЬ

Հասարակության կողմից առավել հաճախ հնչեցրած ատելության, բռնության կոչերը, և միջոցները՝ ԼԳԲՏ անձանց ոնչնացնելու, նրանից «ձերբազատվելու» համար (առանց էական խմբագրման և դասակարգման)

այրել, բենզին լցնել՝ վառել, տանել գոմը՝ վառել,	**քոքից վերացնել**
գլխատել	**չճաշակել երկնքի արքայությունը**
վտարել, լարել	**հալածական դառնալ**
մահ	**բերանները ջարդել**
սատկացնել, քարերով սատկացնել	**մեղքի մեջ մեռնել**
ոչնչացնել, արմատապես ոչնչանալ	**մեղքի դեմ պայքարել**
մեկուսացնել	**մորթել**
ջնջել երկրի երեսից	**քոքից վերացնել**
ստերիլիզացնել	**ծծցնել**
գյուլլել	**քունել**
կռտել	**մաս-մաս կտրտել**
մաքրել հողը	**քարկոծել**
ասֆալտապատել	**նեղել**
ծեծել	**բուժել**
օրենքով արգելել	**և այլն:**

Հասարակության ներկայացուցիչների կողմից առավել հաճախ հնչեցրած ատելության խոսքերը, բռնության կոչերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները, վիրավորանքներն ու հայհոյանքները նույնասեռականության, ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ (առանց էական խմբագրման և դասակարգման)՝

- այլասերվածություն, այլասերվածներ
- հոգեկան շեղում, հիվանդություն, ախտ
- հային, հայ ազգին, հայու գենին ոչ վայել է, պատիվը գցող, հայրենիքը կործանող
- անբարոյականություն, անբնականություն, այլանդակություն է
- սրբապղծություն, սոդոմականություն է
- ավանդական, ընտանեկան արժեքներ քայքայող է
- արժեհամակարգի կործանման պատճառ է
- ազգային արժեքների ոտնահարում է
- սերնդի բացակայության հիմք:

Ելնելով անգամ առցանց տիրույթում օգտատերերի արձագանքից, ակնհայտ է դառնում, որ շատերը ատելությամբ են լցված ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Նույնասեռականության հանդեպ մոտեցումներն այնքան ծայրահեղ անհանդուրժողական ու թշնամական են, որ անգամ մարդկանց այրելու, ոչնչացնելու կոչեր են հնչում: Շատերն անգամ պատրաստ են ԼԳԲՏ անձանց հանդեպ բռնության, ոտնձգությունների գործնական քայլերի իրականացնելուն, եթե լինի ամենաթողություն՝ պետական մակարդակով:

Հասարակության վերոնշյալ արձագանքից, նախկինում կատարված հետազոտություններից պարզ է դառնում, որ մարդկանց մեծամասնության գիտելիքները նույնասեռականության և, ընդհանրապես ԼԳԲՏ համայնքի մասին թյուր են կամ աղավաղված, կարծրատիպերն ու նախապաշարումներն ու դրանցով պայմանավորված վերաբերմունքը, գործողություններն ու արտահայտման ձևերը հիմնված են անձնական, ընտանեկան, կրոնական, ավանդապաշտական, ազգայնական, պետական, աշխարհաքաղաքական և այլ շահերից, ցանկություններից, հետաքրքրություններից, պատկերացումներից, իրազեկվածությունից:

Այսինքն, ավելի շատ առկա են սուբյեկտիվ-զգայական ցանկություններ ու պատկերացումներ, քան օբյեկտիվ դատողություններ: Իսկ դա վկայում է այն մասին, որ պետությունը համապատասխան քաղաքականություն չի վարում երկրում անհանդուրժողականության մթնոլորտը վերացնելու ուղղությամբ:

Ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության առկայության վերլուծություն

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե արդյոք վերը քննարկված արձագանքները պարունակում են ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային հատկանիշներով խտրականության դրսևորում:

Այսպես, մենք գտնում ենք, որ ենթադրյալ իրավախախտները խախտել են տուժողների՝ խտրականությունից զերծ մնալու իրավունքը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ինչպես տուժող կողմն է հայտնում՝ տրամադրված փաստական ապացույցներով, այնպես էլ ենթադրյալ իրավախախտ կողմը չի ժխտում, որ բռնությունը գործադրվել է, արձագանքել են նրանց նույնասեռական լինելու պատճառով, մասնավորապես, վերջիններս իրենց ատելության խոսքերը, վերաբերմունքը, դիրքորոշումն ու գործողությունները հիմնավորում են հետևյալ կերպ. «...Էրեխեքն ասեցին, որ, թե գիտե՞ս մամա Հայկենց տունը «համասեռամոլներ» են հավաքված, ուզում ենք հավաքվենք, լարենք ստեղից..... Ու տենց էրեխեքը ոտի են կանգնել, ու բնական է, որ մենք էրեխեքի կողքին ենք լինելու...»[80] , «...Մանկական հոգին է պղտորվում՝ տղամարդը կանացի հագուստ կրելով, հային ոչ վայել կեցվածքով հանդես գալով, կանացի շարժ ու ձևով...», «...Պետք է օրենսդրորեն սահմանվի խստագույնս պատժել նման արարքներ տարածողներին...»[81], «...Գյուղում «համասեռամոլներ» կան, ուզում ենք խաղաղ ձևով, գեղեցիկ, մի հարցի շուրջ, գյուղից հեռացնենք...», «...Տանը «համասեռամոլներ» են հավաքված, ուզում ենք գնանք, էստեղից լարենք...», «...Վտանգավոր մարդիկ են, ազդում են երեխաների հոգեբանության վրա...», «...Մենք տղա ենք բերում, որ մեր ազգի բանակը հզորանա, ոչ թե «համասեռամոլները» շատանան...», «...Ո՞նց բացատրեմ, որ իմ երեխան հայրենասեր պիտի լինի, թե «համասեռամոլ»...», «...Ո՞րն ա գեղեցիկ հնչելը՝ զինվոր տղաս եկե՞լ ա, թե՞ «համասեռամոլ» տղաս...» [82] և այլն:

Այսինքն, կարող ենք նշել ենթադրյալ իրավախախտների արտահայտած հետևյալ ակնառու ատելության խոսքերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները (ներքևը ներառված չէ տուժող կողմի և իրավապահ մարմինների ներկայացրած տվյալներից).

- ***համասեռամոլներ***
- ***մանկական հոգին պղտորողներ***
- ***վտանգավոր մարդիկ***
- ***երեխաների հոգեբանության վրա ազդողներ***
- ***տղամարդը կանացի հագուստ կրելով, հային ոչ վայել կեցվածքով հանդես գալով, կանացի շարժ ու ձևով հանդես եկողներ և այլն:***

---

[72] https://bit.ly/2VDasD6
[73] https://bit.ly/2JEOFEc
[74] https://epress.am/?p=286500
https://youtu.be/92PjeeaR5hg
https://epress.am/?p=286523
[75] https://bit.ly/23tjEVN
[76] https://rm.coe.int/16800c170f
[b] https://www.arlis.am/documentview.aspx?docID=110802
[77] https://rm.coe.int/16800c170f

ՄԻԵԴ-ի Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի թիվ 40094/05 և Նաչովան ընդդեմ Բուլղարիայի թիվ 43577/98 և 43579/98 [83] վճիռներով տրված մեկնաբանությունների համաձայն՝ խտրականությունը էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության, այսինքն՝ երբ միջոցները չեն հետապնդում իրավաչափ նպատակ և չկա ողջամիտ համաչափություն միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:

Հասկանալու համար՝ արդյոք ենթադրյալ իրավախախտների արձագանքը խտրականություն է, թե ոչ, անհրաժեշտ է անդրադառնալ խտրականության դեպքի համար անհրաժեշտ վավերապայմանների առկայությանը:

Դրանք են՝

1) կարգավորող օրենսդրական նորմը,

2) պաշտպանված հատկանիշը,

3) խտրականության տեսակը,

4) համեմատական եզրը:

1. Որպես կարգավորող օրենսդրական նորմ, ինչպես ոլորտը ներպետական իրավակարգավորմամբ, խտրականության արգելքը համընդհանրորեն սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, մասնավորապես՝ 29-րդ հոդվածով, ինչն անխախտելի է իր էությամբ: Թեև Հայաստանի օրենսդրական դաշտում բացակայում է խտրականության արգելքին ուղղված առանձին իրավական ակտ, իսկ քրեական օրենսդրությունում կոնկրետ պաշտպանված հատկանիշները, այնուամենայնիվ, յուրաքանչյուր ոք սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

2. Այժմ անդրադառնանք նրան, թե տուժողների նկատմամբ արձագանքը արդյո՞ք պայմանավորված է եղել նրանց որևէ պաշտպանված հատկանիշով, թե ոչ, այսինքն՝ այն հիմքերով և առանձնահատկությամբ, որով պայմանավորված են եղել այդ խոսքերն ու բռնությունները: Թեև ՀՀ Սահմանադրությամբ և մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով խտրականությունն արգելող ամրագրումը նախատեսում է խտրականությունից պաշտպանված հատկանիշների ոչ սպառիչ ցանկ, մասնավորապես նշվում է՝ սեռ, ռասսա, մաշկի գույն, էթնիկ կամ սոցիալական ծագում, գենետիկական հատկանիշներ, լեզու, կրոն, աշխարհայացք, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային փոքրամասնությանը պատկանելություն, գույքային վիճակ, ծնունդ, հաշմանդամություն, տարիք, սակայն, միաժամանակ և՛ Կոնվենցիայով (Հոդված 141.), և՛ Հռչակագրով (Հոդված 2. 1., 7.) և՛ ՀՀ Սահմանադրությամբ (Հոդված 29.) ամրագրվում է հետևյալ ձևակերպումը՝ «…անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ…» կամ «…այլ կարգավիճակից…», կամ «…այլ դրությունից…»:

Ուստի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը նույնպես համարվում են պաշտպանված հատկանիշներ, քանզի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային կից թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանվում է խտրականության

[78] https://bit.ly/2HjU021
[79] https://bit.ly/2YpiQmM
https://bit.ly/2HkCafr
https://yelaket.am/?p=41444&l=am
https://bit.ly/2Wa1YmN
https://bit.ly/2vZc5vY
http://www.slaq.am/arm/news/1265536/
https://bit.ly/2VC1qWZ
https://bit.ly/2JF4bja
https://bit.ly/2vYHuyo
https://youtu.be/0SrOBakv5qg
http://bit.do/eSnAT
http://bit.do/eSnA2
http://bit.do/eSnA5
https://www.facebook.com/adekvadism/videos/2132335977025203/
https://www.facebook.com/narek.malyan/posts/2212655378762681
https://www.facebook.com/narek.malyan/posts/2214200428608176
https://www.facebook.com/hakob.ghukasyan.7/posts/1133376153481618
https://www.facebook.com/ngngo/posts/1805360702883024
https://youtu.be/nhZ86ICRlPo
https://youtu.be/EDOToOJ6t44
https://web.facebook.com/SerjTankian/posts/10156537821564798

համընդհանուր արգելքը՝ անկախ հիմքից՝ ցանկացած իրավունքի իրացման համար, որը վավերացրել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանը 2010թ.-ին նաև վավերացրել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec (2010)5 հանձնարարականը «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ», որով ստանձնել է ձեռնարկելու համընդգրկուն, ներառյալ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի առիթով:

Մասնավորապես, վերջինս պարտավորվել է՝ ապահովել ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունների արդյունավետ, արագ և անկախ քննությունը, սահմանել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես ատելության հիմքով հանցագործության պատիժ և/կամ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, խրախուսել ատելության հիմքով հանցագործությունից տուժած անձանց և վկաներին իրավասու մարմիններ հաղորդել նման հանցագործությունների և ատելության հիմքով այլ իրավախախտումների վերաբերյալ տվյալներ, փաստագրելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունները և ատելությամբ ու անհանդուրժողականությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ:

Բացի այդ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն իր Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությունում, որի նպատակը խտրականության արգելքի նորմի մեկնաբանումն էր, ամրագրեց, որ ՏՍՄԻԿ-ում ամրագրված խտրականության արգելքով պաշտպանված «այլ կարգավիճակը» ներառում է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, և անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի անձի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը խոչընդոտ չլինի Կոնվենցիայով ամրագրված իրավունքների պաշտպանության համար[84]:

Կարևոր է նշել, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության՝ որպես պաշտպանված հատկանիշներ իրենց իրավակիրառ ամրագրումն են ստացել ՄԻԵԴ նախադեպային իրավունքով: Մասնավորապես, Վեժդելենդը և այլոք ընդդեմ Շվեդիայի թիվ 1813/07 վճռով Դատարանը նշել է, որ խտրականությունը հիմնված սեռական կողմնորոշման վրա, նույնքան կարևոր է, որքան «սեռի, ռասսայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը[85]:

3. Այժմ դիտարկենք ենթադրյալ իրավախախտում կատարած անձանց արձագանքը, թե որ տեսակի խտրականություն են հանդիսանում: Ակնհայտ է, որ անուղղակի խտրականություն է: Վերջինս հիմնավորվում է հետևյալ կերպ. ենթադրյալ իրավախախտները բացահայտ և բառացիորեն նշում են, որ տուժողները եղել են «համասեռամոլներ», «գոմիկներ»:

Ինչպես նշվեց, համաձայն միջազգային իրավական տեսության, խտրականությունը էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության:

Անուղղակի խտրականությունը առերևույթ չեզոք օրենք, քաղաքականություն, պայման, գործողություն, չափանիշ կամ պրակտիկա է, որոնց կիրառման դեպքում որոշ խմբերի իրավունքները սահմանափակվում են խտրականության արգելքի հիմքերից որևէ մեկով (սեռ, տարիք, հավատ, առողջական վիճակ, գույքային դրություն, և այլն) և այլոց համեմատ նրանք հայտնվում են էապես անբարենպաստ վիճակում [86]:

Իսկ այս դեպքում արձագանքն ուղղված է եղել որոշակի խումբ անձանց՝ «համասեռամոլներ»-ի դեմ՝ վերջիններիս համար ստեղծելով այլոց համեմատ ակնհայտ

անբարենպաստ իրավիճակ՝ առանց որևէ ողջամիտ հիմքի կամ ողջամիտ բացատրության: Խտրական, ատելություն, թշնամանք սերմանող խոսքերի արտահայտումը և դրանց հետ միաժամանակ ֆիզիկական, հոգեբանական բռնության կիրառումը, գյուղից վտարումը ուղղակի խտրական վերաբերմունքի դրսևորում է՝ պայմանավորված այդ անձանց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ:

4. Այժմ անդրադառնանք համեմատական եզրին՝ համեմատելու տուժողների նկատմամբ դրսևորված վերաբերմունքը մեկ այլ անձանց խմբի նկատմամբ դրսևորված վերաբերմունքի հետ և ցույց տալու, որ նման հանգամանքների պայմաններում այլ անձինք առավել բարենպաստ վերաբերմունքի են արժանանում, կամ կարող են արժանանալ, քան նույնասեռական անձինք:

Այդ պնդումը հիմնավորվում է նրանով, որ ենթադրյալ իրավախախտները չեն փորձում թաքցնել, որ եթե տուժողները «համասեռամոլ տղաներ» չլինեին, այլ լինեին, օրինակ, ինչպես իրենք են նշում՝ «զինվոր տղաներ», ավելի գեղեցիկ, ավելի հաճելի կինչեր, կամ, եթե «տղամարդը, ով կանացի հագուստ է կրում, հային ոչ վայել կեցվածքով, կանացի շարժ ու ձևով է հանդես գալիս», այդպես չլիներ, ապա՝ նրանց չէին վիրավորի կամ հայհոյի, չէին ծեծի, երեխաների «մանկական հոգին չէր պղտորվի» և նրանք գյուղից չէին «լարի»:

Այսինքն, տուժող անձինք իրենց իրավունքներից և ազատություններից չէին սահմանափակվի կամ դրանք չէին խախտվի, եթե նման հանգամանքներում ԼԳԲՏ անձ չլինեին:
Ուստի կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ իրավախախտների կողմից հնչեցված խտրական, ատելություն սերմանող արտահայտությունն ու կատարված բռնությունները պայմանավորված են նրանց ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ:

Հանրապետության հրապարակ, մայիսի 1, 2018
Gleb Garanich/REUTERS

Ատելության խոսքի առկայությունը

Այսպիսով, բացահայտ է և անվիճելի, որ 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ պետական/հասարակական գործիչների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների, հասարակության կողմից վերոնշյալ բոլոր արտահայտման ձևերը պարունակում են ատելության խոսքեր, բռնության կոչեր, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտություններ: Թեև ներպետական օրենսդրությամբ սահմանված չէ սեռական կողմնորոշմամբ և գենդերային հիմքով պայմանավորված ատելության խոսքը, այնուամենայնիվ, ինչպես նշել էինք, այն մեկնաբանվում է այնքանով, որքանով մեկնաբանված է Հայաստանի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերով, ՄԻԵԴ նախադեպային իրավունքով:

Նախ, արձանագրված է այն հանգամանքը, որ իրավախախտների կողմից 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ արտահայտված խոսքերը, բռնի գործողությունները իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով է կատարվել: Իսկ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելության խոսքը փոխկապակցված են՝ թեև նրանց անմիջական կապը հազվադեպ է ապացուցվում, սակայն ատելության շարժառիթով պայմանավորված բռնությունները հաճախ տեղի են ունենում ատելության խոսքի համատեքստում[87]:

Իսկ, ինչպես սահմանվել էր, վերոնշյալ միջազգային իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայով, կարող ենք ամփոփ եզրակացնել, որ ***ատելության խոսքը հրապարակայնորեն տարածված, ատելություն և թշնամանք սերմանող, խտրական, սպառնալից, վիրավորող, նվաստացնող, բռնության դրդող դրանք խրախուսող, արդարացնող բանավոր, գրավոր, պատկերավոր և այլ արտահայտման ձևերով արտահայտվող, ցուցադրվող, դրսևորվող խոսքն ու վարքագիծն է անհատի կամ մի խումբ մարդկանց նկատմամբ՝ պայմանավորված նրանց որոշակի հատկանիշներից,*** մասնավորապես, այս դեպքում՝ ***ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշումից և/կամ գենդերային ինքնությունից:***

Ուստի այս դեպքում, պարզ է դառնում, որ ենթադրյալ իրավախախտների կողմից հրապարակայնորեն ատելություն և թշնամանք սերմանող, խտրական, սպառնալից, վիրավորող, նվաստացնող, բռնության դրդող բանավոր արտահայտված խոսքերն ու դրսևորած վարքագիծը, պայմանավորված լինելով 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնությամբ, ատելության խոսք են: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ ներկա են այն բոլոր հանգամանքները, որոնք վկայում են ատելության խոսքի առկայությունը: Այսինքն, եթե պայմանականորեն բաժանենք բաղադրիչների, ապա կհանգենք այն եզրակացության, որ ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված խոսքերը, մասնավորապես՝ կապված անձանց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հատկանիշներով, բռնության գործադրման ընթացքում կամ դրանից հետո և առցանց տիրույթում նրանց շարժառիթի ապացույց են: Ատելության խոսք հնչեցնողի կողմնակալության պատճառը նա է, որ տուժողներն, ենթադրյալ կամ իրական նույնասեռական են, ում նրանք

վիրավորական կերպով «համասեռամոլ» են կոչում, և դրանով պայմանավորված՝ «հոգեկան շեղում» ունեցող մարդիկ են կոչում, «սրբապիղծներ», «անբարոյականներ» և այլն, իսկ նրանց նախապաշարումներն այն է, որ, այսպիսով՝ նրանք «հայրենիք են կործանում», «ավանդական, ընտանեկան արժեքներ քայքայում», «ազգային արժեքներ ոտնահարում», և այլն: Այսինքն, նրանց հնչեցրած խտրականություն, թշնամանք, վիրավորանք, անհանդուրժողականություն պարունակող արտահայտությունները, որոնք ինքնին ատելության խոսք են, *օգտագործվում են որպես պատրվակներ, որպես պատճառ նման կերպ արձագանքելու համար, որպես դրդող հանգամանք խտրական վերաբերմունք դրսևորելու համար:*

Մյուս կարևոր բաղադրատարրը ատելության խոսքի, ինչպես նշվել էր, այդպիսի խոսքերի բովանդակությունում վիրավորանքի առկայությունն է, երբ ատելություն է սերմանում կամ վիրավորում է անձի կամ որոշակի խումբ մարդկանց, արատավորում է անձի կամ այդ խմբի պատիվը և արժանապատվությունը: «Վիրավորանք» եզրույթն, ինչպես նշվել էր և սահմանվել, ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ: Իսկ պարզելու համար, թե վերոնշյալ արտահայտությունները վիրավորանք են, թե ոչ, անհրաժեշտ է գնահատողական դատողություն իրականացնել:

Վերջինս իր էությամբ կարծիք է, ենթադրություն, որևէ իրին կամ երևույթին տրված սուբյեկտիվ գնահատական: Այս հասկացության մեկնաբանությունը տրված է Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով որոշման[88], ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԿԴ/2050/02/12 գործով վճռի մեջ[89]:

1. Այսպես, վիրավորանքի առկայության համար առաջին նախապայմանը արտահայտության հրապարակային լինելն է: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը):
Հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով (թիվ ԵԿԴ/2293/02/10)[90]:

Իսկ «Մեկ երրորդ անձ» չափանիշը կիրառելի է նաև համացանցի նկատմամբ: Հետևաբար, համացանցում արված հայտարարությունը կամ սոցիալական ցանցում արված գրառումը հրապարակային հայտարարություն է, եթե առնվազն երրորդ անձ հաղորդակից է լինում այդ հայտարարությանը: Թիվ ԵԱԴ/0074/02/12 քաղաքացիական գործով վճռում դատարանը ներմուծել է «հասանելի է բոլորին» եզրույթը, ըստ որի՝ սոցիալական ցանցերում բոլորին

[80] *«Զանգեզուր TV», «Շուռնուխի ...շուխուռը... չի դադարում». https://youtu.be/EDOToOJ6t44*
[81] *«Իրավունք թերթ», «Շուռնուխում տեղի ունեցածը ծրագրավորված սցենար էր». https://youtu.be/cm9x8y6cEJ4*
[82] *«Իրավունք թերթ», «Հայաստանում ԼԳԲՏ-ականների օրենքն ընդունված չի ու չի էլ ընդունվելու». https://youtu.be/6bD7etjsEqQq*
[83] *http://hudoc.echr.coe.int/eng?i=001-69630*
[84] *http://www.refworld.org/docid/4a60961f2.html*
[85] *http://hudoc.echr.coe.int/eng-press?i=003-3837416-4406280*
[86] *ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն, § 13*
[87] *https://www.osce.org/odihr/39821?download=true*
[88] *http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812273061*
[89,90] *http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812288345*

հասանելի եղանակով տեղադրված հայտարարությունը հրապարակային հայտարարություն է[91]:

Վերոնշյալ բոլոր գրառումները հասանելի են եղել սոցիալական կայքերում և տարածվել են ՁԼՄ-ներով ու հայտնվել ողջ առցանց տիրույթում: Ուստի հիմնավորվում է այն փաստը, որ վերոնշյալ խոսքերը հրապարակային արտահայտություններ են:

2. Վիրավորանքի առկայության համար երկրորդ նախապայմանը արտահայտության արատավորող լինելն է: Վերջինս իր բնույթով չափազանց զգայուն տարր է, ուստի այն հնարավորինս լայն մեկնաբանման կարիք ունի: Ըստ Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0749/02/10 գործով որոշման. «Արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»[92]:

Իսկ ըստ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0179/02/13 գործով որոշման. «Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրուծանակի, ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարհանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից»[93]:

ԵԿԴ/1963/02/10 գործով վճռում տրվում է հետևյալ մեկնաբանությունը. «Արատավորող են համարվում այն տեղեկությունները, որոնք կարող են նսեմացնել քաղաքացու կամ իրավաբանական անձի արժանիքները: Պատիվն անձի օբյեկտիվ գնահատականն է՝ անձի նկատմամբ հասարակության վերաբերմունքը որոշող, ինչպես նաև անհատի բարոյական և այլ վարկանիշների սոցիալական գնահատականն է: Արժանապատվությունն անհատի ներքին ինքնագնահատականն է, անձնական հատկանիշների ընդունակությունների աշխարհայացքի գիտակցումը»[94]:

Վերջապես թիվ ԵԱԴԴ/0003/02/11 գործով վճռում այն հետևյալ կերպ է մեկնաբանվում. «Պատիվը անհատի հասարակական գնահատականն է, քաղաքացու որոշ հոգևոր և սոցիալական հատկանիշները: Այն մարդու համար հանդիսանում է այնպիսի բարիք, ինչպիսին է իր կյանքը, առողջությունը և ազատությունը: Մարդն, ով գնահատում է իր պատիվը, հավասարեցնում է այն իր բարի համբավին և խղճին: Արժանապատվությունը անձի կողմից սեփական հատկանիշների, կարողությունների, աշխարհայացքի, իր վարքի, հասարակական նշանակության գնահատումն է»[95]:

Այս դեպքում վերոնշյալ խոսքերն, ինչպիսիք են՝ հոգևոր շեղում, այլասերվածություն, անբարոյականություն, այլանդակություն, սրբապղծություն և այլն, ակնհայտ անձի արժանիքները նսեմացնող, նվաստացնող, անհատի անձնային, հոգևոր-բարոյական արժեքները խոցող, ցածր սոցիալական գնահատական տվող, ինքնագնահատականն ու վարկանիշը ցածրացնող, ծաղրող,

[91] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=15762598695811339
[92] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438187776
[93] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072740948540
[94] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812272272
[95] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=15762598695807692

հեգնող, հայհոյող արտահայտություններ են: Ուստի հիմնավորվում է այն փաստը, որ վերոնշյալ խոսքերը արատավորող արտահայտություններ են:

3. Երրորդ նախապայմանը դա նպատակի, դիտավորության առկայությունն է: Դա հիմնավորվում է միայն փաստերով՝ և առաջին հերթին անձի կոնկրետ գործողություններով կամ հայտարարություններով, որոնք նախորդել կամ հաջորդել են վիճահարույց հրապարակմանը: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի փաստերի վրա, որոնք ցույց են տալիս, որ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար, կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու հանգամանքի մասին: Այդ առումով, Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 որոշման մեջ նշվում է, որ «դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյոք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորել որևէ մեկին, թե օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում»[96]: Սույն նախապայմանը հիմնավորվում է նրանով, որ եթե անգամ մարդիկ չգիտեն, որ նույնասեռականությունը հոգեկան հիվանդություն չէ, ապա՝ այն իրենց համար այլասերվածություն, անբարոյականություն է կամ ավանդական, ընտանեկան արժեքներ քայքայման կամ հայրենիքի կամ արժեհամակարգի կործանման կամ ազգային արժեքների ոչնչացման պատճառ է, և այլն:

Իսկ դա կտրականապես անընդունելի է իրենց համար, և նրանք պատրաստ են այնպիսի գործողություններ կատարելուն, ինչպիսիք են՝ ծեծելը, այրելը կամ մեկ այլ կերպ ոչնչացնելը: Այսինքն, արտահայտությունների նպատակն է դիտավորյալ կերպով առավել նվազ և անբարենպաստ կամ էլ ընդհանրապես՝ «չգոյության պայմաններում» ԼԳԲՏ անձանց տեսնելը: Ուստի ևս հիմնավորվում է այն փաստը, որ վերոնշյալ խոսքերը դիտավորության առկայությամբ կատարված արտահայտություններ են: Հետևաբար, եթե ընդհանրացնենք վերոնշյալը, ապա՝ կհանգենք այն եզրակացության, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով պայմանավորված թշնամական, անհանդուրժողական արտահայտություններ և պատիվն ու արժանապատվությունն արատավորող վիրավորանքներ են հնչեցվել 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ, որոնք արտահայտման տարբեր ձևերով տարածում են անհանդուրժողականություն, դրդում արտահայտելու հայհոյանքների ու իրականացնելու գործողությունների, ինչպես նաև արդեն իսկ խրախուսում կամ արդարացնում են կատարված բռնությունները, և փաստորեն, հանդիսանում են ատելության խոսքեր: Ուստիև պետք է տարբերակել այլ դեպքերում հնչեցված վիրավորանքը, սույն դեպքից: Ակնհայտ է, որ ենթադրյալ իրավախախտների, մյուս անձանց հնչեցրած վիրավորող, նսեմացնող, արատավորող բոլոր խոսքերն ու արտահայտման ձևերը պայմանավորված են եղել անձանց ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե, ընդհանուր առմամբ, 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ ատելության խոսքերը, բռնության կոչերը, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտություններն ու առցանց տիրույթում համընդհանուր անհանդուրժողականությունն ինչ մանիպուլյացիոն գործիքներով է արդարացվում և ներկայացվում հասարակությանը:

Zied Mnif

Այսպես, ըստ արձանագրված վերոնշյալ բոլոր փաստական հիմքերի և եզրակացությունների՝ դրանք հիմնականում հետևյալներն են (առանց հերթականության և դասակարգման)՝

- ***կրոնական համայնքում՝ նույնասեռականությունը մեղք է համարվում, սրբապղծություն, ԼԳԲՏ մարդիկ՝ այլասերվածներ, ինչը կրոնականության բարձր մակարդակ ունեցող երկրում օգտագործվում է որպես մանիպուլյացիոն գործիք՝ որոշակի հատկանիշներ ունեցող անձանց կամ խմբին ներկայացնելով որպես հակակրոնական, հակաքրիստոնեական արժեքներ***
- ***ազգայնականների շրջանում՝ երևույթը ներկայացվում է որպես հայրենիքը կործանող, հայի գենն անպատվող, ժողովրդագրական խնդիրների հանգեցնող***
- ***ավանդապաշտական դաշտում՝ երևույթը ներկայացվում է որպես պատմականորեն ձևավորված և ամրացած ավանդական արժեքներին հակասող, որը քանդում է ավանդական հայկական ընտանիքը, արժեհամակարգը:***

Վերոնշյալ խմբերի կողմից օգտագործվում են հետևյալ հանգամանքները՝

- ***Օրենսդրական բացը, մասնավորապես՝ բացակայում է ատելության խոսքի,***

ատելության հիմքով հանցագործությունների սահմանումները, պատժի և պատասխանատվության առանձնահատկությունները, որը նախ թույլ է տալիս իրավակիրառ մարմիններին չանդրադառնալ ատելության խոսքի դրսևորումներին, «աչք փակել» դրանց վրա, իսկ իրավախախտներին տեղիք տալիս կրկին կատարել նմանատիպ հանցագործություններ

- *իրավագիտակցական մակարդակը. ցածր է կամ բացակայում են մարդու գիտելիքները մարդու իրավունքների, խտրականության բացառման, իրավահավասարության վերաբերյալ, ցածր է իրավական մշակույթի մակարդակը, որը թույլ է տալիս քաղաքական և/կամ այլ անձնական նպատակներից, շահերից ելնելով որոշակի հատկանիշներով անձի և/կամ մի խումբ անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների հետագա խախտման կամ սահմանափակման համար,*
- *անկրթության կամ տեղեկացվածության բացակայությունը, որի պարագայում նույնասեռականությունը համարվում է հիվանդություն, ԼԳԲՏ անձինք՝ հոգեկան շեղում ունեցող մարդիկ, որն օգտագործվում է քաղաքական և/կամ այլ անձնական նպատակներից, շահերից ելնելով որոշակի հատկանիշներով անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ անհանդուրժողականություն պարունակող խոսքեր արտահայտելով, խտրական կամ բացահայտ նախապատվություն, նվազբարենպաստ վերաբերմունք դրսևորելով նրանց դեմ պայքարելու համար*
- *նախապաշարումներով ամրացած հասարակությունում անձնական-սուբյեկտիվ ընկալումները. երևույթը համարվում է անբնական, այլանդակություն, որն օգտագործվում է քաղաքական և/կամ այլ անձնական նպատակներից, շահերից ելնելով որոշակի հատկանիշներով անձի և/կամ մի խումբ անձանց նկատմամբ կարծրատիպեր սերմանելով:*

Արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումն՝ ատելության խոսքի համատեքստում

Թեև ատելության խոսքը և ատելության հիմքով հանցագործությունները փոխկապակցված են, դրանք պետք է տարբերենք միմյանցից: Երկուսն էլ անհանդուրժողականության և նախապաշարումների «ախտանիշ» են, բայց շատ ատելության հիմքով հանցագործություններ չեն ընդգրկում արտահայտվելու ազատության իրավունքի իրացումը[97]:

Իսկ ո՞րն է այդ սահմանը, որով անհրաժեշտ է տարբերակել արտահայտման ազատությունը ատելության խոսքից: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ելնելով արդարության սկզբունքից, անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե արդյոք ենթադրյալ իրավախախտների, պետական պաշտոնյաների, կրոնական կազմակերպությունների և հասարակության մնացած բոլոր ներկայացուցիչների խոսքերը 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ արտահայտման ազատության թույլատրելի շրջանակներում է: Պետք է նշել, որ խոսքի ազատության իրավունքն ամրագրված է ՄԻԵԿ 101–րդ հոդվածով, համաձայն որի՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը» [98]:

Իսկապես, վերջինս համարվում է մարդու ամենաարժեքավոր իրավունքներից մեկը՝ երաշխավորված ոչ միայն Կոնվենցիայով, այլև՝ ՀՀ Սահմանադրությամբ: Այն ոչ միայն յուրաքանչյուր անձի՝ իր տարբեր տեղեկություններն ու գաղափարները (փաստական դիրքորոշումներն ու արժեքավոր դատողությունները) տարածելու իրավունքն է, այլև իրավունքն է ստանալու տեղեկատվություններ և հաղորդակցվելու նրանց հետ: Լինելով մարդու անքակտելի իրավունքներից մեկը՝ այն ուղղակիորեն արտահայտում է մարդու անհատականությունը հասարակությունում և կախված չէ պետության հաստատումից: Արտահայտման ազատությունը պետության ժողովրդավարության մասն է կազմում, երբ այն կանգնում է, ժողովրդավարությունն էլ չի զարգանում: Սակայն բացի արտահայտման ազատությունից, կան նաև այլ հիմնարար իրավունքներ, որոնք նույնպես կարևոր են, որոնցից է նաև մարդու անհատականության պաշտպանությունը: Եվ անհրաժեշտ է լուծել այն խնդիրը, թե որն է գտնվում ավելի բարձր սանդղակում [99]:

ՄԻԵԴ-ն իր դիրքորոշումներում (Հանդիսայդն ընդդեմ Մեծ Բրիտանիայի, թիվ 5493/72) նույնպես բարձր է գնահատել արտահայտման ազատության դերը՝ համարելով, որ խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության արժեքավոր հիմնաքարերից մեկն է, ինչպես նաև յուրաքանչյուր մարդու առաջընթացի ու զարգացման հիմնական պայմաններից մեկը: ՄԻԵԿ 10[1]–րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն այն «տեղեկությունների» կամ «գաղափարների» համար, որոնք դրականորեն են ընդունվում կամ ճանաչվում են անվնաս կամ

[96] *http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812273061*
[97] *https://www.article19.org/data/files/medialibrary/38231/Hate_speech_report-ID-files--final.pdf*
[98] *http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870*
[99] *https://rm.coe.int/media-regulatory-authorities-and-hate-speech/16807338f5*

չեզոք են, այլև նրանք, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ հասարակության որևէ հատվածին: Դրանք են բազմակարծության, հանդուրժողականության, շրջահայացության պահանջները, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»: Դա նշանակում է, որ այս պայմանների հետ մեկտեղ յուրաքանչյուր «ձևականություն», «պայման», «սահմանափակում» կամ «պատժամիջոց» այս առումով պետք է համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին [100]:

Գուցե սա կարող է նշանակել, որ ատելության խոսքը, լինելով խտրականության մի դրսևորում և պաշտպանված լինելով ՄԻԵԿ 14-րդ հոդվածով, չի պաշտպանվում ՄԻԵԿ 10-րդ հոդվածի շրջանակներում, որն երաշխավորում է արտահայտման ազատությունը [101]:

Սակայն այն հիմնական չափանիշները, որոնց վրա ՄԻԵԴ-ը հիմնվում է որոշումներ ընդունելիս և պարզում, թե արդյոք որոշակի խոսքերի համար պատասխանատվություն ենթարկելը համապատասխանում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասին (խոսքի ազատության իրավաչափ սահմանափակմանը), Կոնվենցիայի 17-րդ հոդվածին (իրավունքների չարաշահման արգելքը), ներառում է հետևյալը՝

ա/ *խոսքի նպատակը. առաջին հերթին՝ այն արդյո՞ք ռասիստական գաղափարներ կամ այլ խոսքեր տարածելու մտադրություն ունի, որի նպատակն է հասարակությանը տեղեկացնել հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի շուրջ,*

բ/ *խոսքի կոնտենտը (բովանդակությունը). համապատասխան խոսքը հանգեցնու՞մ է արդյոք անընդունելիության, թշնամական զգացմունքների կամ ատելության թիրախային բնակչության նկատմամբ,*

գ/ *խոսքի կոնտեքստը. որո՞նք են իրավախախտների դերը և կարգավիճակը հասարակությունում, ինչպիսի՞ն է գերակշռող հասարակական տրամադրությունը (social climate), ի՞նչը հանգեցրեց նման արտահայտություններին, ովքե՞ր են թիրախ լսարանը [102]:*

Այս հարցերին պատասխանելով, կարող ենք արձանագրել, որ առկա է իրավաչափ նպատակ՝ արտահայտվելու ազատության իրավունքի համաչափ սահմանափակելու համար, որոնք հեևվում են վերոգրյալ եզրահանգումներից:

Նախ՝ նշենք սույն իրավունքի սահմանափակման միջազգային իրավակարգավորումը. Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանվում է, որ ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով, իսկ 17-րդ հոդվածով արգելվում է իրավունքների չարաշահումը:

Այսպիսով, ենթադրյալ իրավախախտները և Շուռնուխի դեպքի վերաբերյալ ատելությամբ արտահայտված հասարակության ներկայացուցիչները, այդ թվում՝ պետական պաշտոնյաներ, կրոնական կազմակերպության ներկայացուցիչներ, և այլն, որոնք հասարակության

[100] *http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57499*
[101] *http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57891*
[102] *https://rm.coe.int/media-regulatory-authorities-and-hate-speech/16807338f5*

վերաբերմունքի և դիրքորոշման վրա ազդեցություն գործելու հնարավորություն ունեն, հրապարակայնորեն են արտահայտվել:

Նրանք դիտավորությամբ մտադրություն են ունեցել հանրային չափազանց մեծ հետաքրքրություն ունեցող հարցի շուրջ իրենց շահերը բարձրաձայնել՝ ներկայացնելով տարբեր հիմնավորումներ: Նրանք արտահայտվել են խտրական, սպառնալից, վիրավորող, նվաստացնող, բռնության դրդող բանավոր արտահայտված խոսքեր ու դրսևորել վարքագիծ՝ դրանով իսկ սերմանելով ատելություն և թշնամանք:

Հասարակությունն, ըստ բազմաթիվ հետազոտությունների, ինչպես նաև վերոգրյալ տվյալների, ունի չափազանց մեծ անհանդուրժողական վերաբերմունք ԼԳԲՏ անձանց նկատմամբ, իսկ 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ կատարված բռնի գործողություններն ու ատելության խոսքերը պայմանավորված են եղել ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով, ինչպես նաև նպատակ են ունեցել տեղեկացնել, ողջ բնակչության ուշադրությանը հրավիրել պետական մարմիններին՝ օրենսդրորեն նույնասեռականության «քարոզն» արգելելու համար և, ավելին, նրանց ոչնչացնելու համար: Իսկ մարդկային կյանքն ու արժանապատվությունն որևէ կերպ չի կարող ցածր դասվել արտահայտման ազատության իրավունքից, հետևաբար վերջինիս սահմանափակումը համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին:

Ատելության խոսքի համատեքստում արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումը դիտարկենք նաև այլ միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակներում: Ինչպես նշվեց, արտահայտման ազատությունը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը: Այն ամրագրված է նաև ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածով, որտեղ սահմանվում է, որ «***1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին: 2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»***[103]:

Սակայն, միևնույն ժամանակ, նույն Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրվում է, որ. «Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ. ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար. բ/ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»: Նույն Դաշնագրի 20-րդ հոդվածով սահմանվում է, որ ***«1. Պատերազմի որևէ քարոզչություն պետք է արգելվի օրենքով: 2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով»:***

Բնականաբար, իրավունքի սահմանափակումը և՛ Կոնվենցիայով, և՛ Դաշնագրով սահմանվում է երկու չափանիշի դեպքում՝ օրենքով սահմանված լինելու ու անհրաժեշտ լինելու դեպքում: Թեև ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված չէ ատելության խոսքը, սակայն խտրականությունից, ատելության քարոզի համընդհանուր արգելումը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, որոշակիորեն Քրեական օրենսգրքով, ինչպես նաև Հայաստանի կողմից ստորագրված և վավերացված միջազգային իրավական փաստաթղթերով: Իսկ երկրորդ

չափանիշը, որը վերաբերում էր նրան, թե արդյոք անհրաժեշտ է սահմանափակել արտահայտվելու ազատության իրավունքը, միանշանակ պարզ է դառնում, որ այն հիմնավորվում է նույն Դաշնագրով սահմանված դրույթներով, այն է՝ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար: Այս դեպքում պետք է նշել, որ իրենց որոշակի հատկանիշներով պայմանավորված այդ մի խումբ մարդկանց նկատմամբ պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող, վիրավորող արտահայտություններ ու բռնության կոչեր են հնչել: Մարդկանց իրավունքներն ոտնահարվել են, նրանց առողջությանը պատճառվել է վնաս: Իսկ հետագա ատելության ու անհանդուրժողականության մթնոլորտի վերացման և հասարակական կարգի խաղաղ պահպանման համար անհրաժեշտ է սահմանափակել նման արտահայտման ձևերը, որպեսզի չխրախուսվի, չդրդվի, չարդարացվի ու այդ կերպ չտարածվի նման խոսքերն ու բռնի գործողությունները:

Այսպիսով, թե՛ պետական պաշտոնյաների, թե՛ հասարակական գործիչների, թե՛ կրոնական համայնքի ներկայացուցիչների խտրական վերաբերմունքը, դիրքորոշումն ու վարքը ուղղակիորեն հանգեցնում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի կրկնապատկմանը և դրա հիմքով գործողությունների իրականացմանը: Այն հասարակական լայն շրջանակներում ԼԳԲՏ անձանց հանդեպ թշնամական վերաբերմունքի, ատելության, բռնության կոչերի և այլ անհանդուրժողականության դրսևորումների առիթ է: Իրավապահ մարմինների անգործության կամ ոչ պատշաճ գործողությունների արդյունքում խորանում է անպատժելիության դրությունը երկրում: Իսկ ՁԼՄ-ներն այս առումով դառնում են ատելության խոսքի տարածման առաջնային օղակներ: Ուստի այս առումով և՛ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի անհանդուրժողականության մթնոլորտը վերացնելու համար:

Իսկ ի՞նչ է հանդուրժողականությունն ընդհանրապես: Այսպես, ***«Հանդուրժողականության խթանման եվրոպական ազգային շրջանակի կանոնադրություն. ներկայացված է եվրոպական երկրների օրենսդրության կողմից ընդունվելու նպատակով»*** փաստաթղթում ներկայացվում են հանդուրժողականության հետևյալ դրույթները.

- *Մարդկային արժանապատվության հանդեպ հարգանքը հիմնվում է մարդկանց տարբերության և յուրաքանչյուր մարդու՝ տարբերվող/ուրիշ լինելու անվիճելի իրավունքի ճանաչման վրա.*
- *Հանդուրժողականության դրույթը հակադրվում է անօրինական խտրականության ցանկացած տեսակին.*
- *Ժողովրդավարական հասարակության մեջ համագոյակցությունը և համագործակցությունը պահանջում է, որ անհատները և խմբերը փոխըմբռնմամբ մոտենան միմյանց.*
- *Տարբերվող խմբերի տարբերակիչ բնութագրիչների նկատմամբ հարգանքը չպետք է թուլացնի պատասխանատու քաղաքացիության ընդհանուր պարտավորությունները ժողովրդավարական կամ բաց հասարակությունում՝ որպես ամբողջի[104]:*

Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հանդուրժողականության սկզբունքների մասին հռչակագրում վերջինս հետևյալ կերպ է բնութագրվում.

- *Հանդուրժողականությունը հարգանք է, ընդունելություն և գնահատում մեր աշխարհի մշակույթների հարուստ բազմազանության, մեր արտահայտչաձևերի և մարդկային լինելու եղանակների նկատմամբ: Դրան նպաստում է գիտելիքը, բացությունը, հաղորդակցությունն ու մտքի ազատությունը, խիղճն ու հավատը: Հանդուրժողականությունը ներդաշնակությունն*

է տարբերությունների մեջ: Դա ոչ միայն բարոյական պարտավորություն է, այլ և քաղաքական և իրավական պահանջ: Հանդուրժողականությունը առաքինություն է.

► *Հանդուրժողականություն նշանակում է՝ ընդունել, որ մարդկային էակները, լինելով տարբեր իրենց տեսքով, իրավիճակով, խոսքով, վարքով և արժեքներով, ունեն իրավունք խաղաղության մեջ ապրելու և լինելու այնպիսին, ինչպիսին կան[105]:*

Ի վերջո, հանդուրժողականությունը մարդկային արժանապատվությունը հարգելու պարտավորություն է[106]:

Ահա այս տրամաբանության և արժեքների վրա պիտի լինի յուրաքանչյուր իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետությունում հասարակության զարգացման հիմքում:

Ոստիկանության արձագանքը

Նախ՝ պետք է նշել, որ ՀՀ ոստիկանության տված պարզաբանման մեջ, որքան էլ, որ իրավապահ մարմինը փորձել է անաչառ ներկայացնել դեպքի փաստական հանգամանքները՝ անընդունելի է իր պարզաբանումներում կամ հայտարարություններում օգտագործել «համասեռամոլներ» եզրույթը[107]:

Այժմ ուսումնասիրենք, իրավապահ մարմինների[108], մասնավորապես, ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի՝ տուժողների ահազանգին արձագանքելը, քայլեր ձեռնարկելը: Դիտարկենք այն հետևյալ չափորոշիչով՝ արդյոք բռնության դեպքին արձագանքվել է ողջամիտ ժամկետում: Դա հասկանալու համար պետք է պարզել այնպիսի գործոնները, ինչպիսիք են հնարավորինս վաղ ժամկետում դեպքի վայր հասնելը, իրադրության բարդությունը, դիմումատուների իրավիճակը և հենց իրենց՝ իրավապահ մարմինների վարքագիծը: Ինչպես գիտենք, ոստիկանության աշխատակիցները դեպքի վայր էին ժամանել կանչից ավելի քան մեկ ժամ անց՝ 21:30-ի սահմաններում, ինչը ենթադրում է առկա պայմաններում շատ երկար, այսինքն՝ ոչ օբյեկտիվ ժամանակահատված: Իրադրության բարդությունը բխում է հասարակական վտանգավորության աստիճանից, որը կախված է նաև գործում ներգրավված մարդկանց թվից, որոնք են՝ տուժողները, իրավախախտներն ու վկաները, ինչպես նաև այլ ծանրացուցիչ հանգամանքներ (խտրականություն, ատելության խոսք): Տուժող անձանց թիվը եղել է 9-ը, իսկ իրական կամ ենթադրյալ իրավախախտների շրջանակը գերազանցել է 30-ը: Թեև յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է իրավապահ մարմնի օպերատիվ աշխատանքը, սակայն վերոնշյալ գործոնը հաշվի առնելով, ոստիկանությունը պետք է լրացուցիչ ջանքեր գործադրեր: Մյուս գործոնը դիմումատուների կամ տուժողների իրավիճակն է, իսկ այս դեպքում առաջացել էր այնպիսի պայմաններ, որ նրանց կյանքին անմիջական վտանգ էր սպառնում, քանի որ տուժողները ստացել էին բազմաթիվ վնասվածքներ, այդ թվում՝ նրանցից երկուսի մոտ առկա են եղել միջին ծանրության մարմնական վնասվածքներ: Նրանք ահաբեկված են եղել ատելության կոչերով, որի մասին հայտնվել է ոստիկանությանը: Հաջորդ գործոնը՝ իրավապահ մարմնի, իսկ ավելի կոնկրետ՝ ոստիկանության Գորիսի բաժնի «պասիվ» վարքագծի դրսևորման «նախկին փորձն» է, երբ տուժողներից երկուսին Գորիսում բռնության էին ենթարկել, որոնք հաղորդում էին ներկայացրել ոստիկանություն, սակայն ոստիկանությունը քրեական գործ չի հարուցել: Դա ևս տեղիք է տալիս ենթադրելու, որ ոստիկանության աշխատակիցները շահագրգռված

չեն եղել հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ բոլոր գործողություններն իրականացնելու, իսկ այս դեպքում՝ ժամանակին դեպքի վայր հասնելու համար: Իզուր չէ, որ իրավապաշտպան հասարակական միավորումները բազմիցս նշել են, որ իրավապահ մարմինների անգործությունը և՛ նախադրյալ է նման իրավախախտ վարքագծի դրսևորման համար: Բացի այդ ոստիկանության աշխատակիցները չեն ապահովել տուժող անձանց անվտանգ տեղափոխումը Գորիսից մինչև Երևան, դա իրականացվել է իրավապաշտպան կազմակերպության միջոցով, որի մասին կազմակերպությունն իր պարզաբանումներում նշել է: Կատարված հետազոտություններից, տարեկան զեկույցներից[109], ինչպես նաև սույն դեպքից և՛ կարող ենք հետևություն անել, որ օրենսդրական բացի, ոստիկանության աշխատակիցների անպատրաստվածության, անիրազեկության, անգամ անգործության հետևանքով ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքը, անհանդուրժողականությունն ու ատելության հիմքով հանցագործությունները շարունակում են տարածված բնույթ կրել:

Վերջինս կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ, այն առումով, որ մարդկանց մոտ կստեղծվի կամ կամրապնդվի այն դիրքորոշումը, որ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ցանկացած իրավախախտում՝ լինի, թե ՝ պատիվը և արժանապատվությունը նվաստացնող, վիրավորող արտահայտություններ, ատելության խոսքեր, բռնության կոչեր, թե՝ նրանց հատկանիշներով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություններ՝ «կարդարացվեն» ինչպես պետության, այնպես էլ հասարակության կողմից: Իսկ եթե արդարացվեն, ապա նրանք կշարունակեն իրականացնել այդ բռնությունները կամ կարտահայտեն ատելության խոսքերն՝ առանց կաշկանդվելու՝ ոտնահարելով մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

Այս առումով ՌԱԵՀ-ն, ի լրումն և բարելավելու համար ատելություն սերմանող խոսքի դեմ գործող քրեական իրավունքի դրույթների կիրառումը, իր զեկույցներում առաջարկել է, որպեսզի ՀՀ իրավապահները վերապատրաստվեն ռասիզմի, ռասսայական խտրականության և անհանդուրժողականության դեմ ներպետական և միջազգային նորմերի ոլորտում: Թեև վերապատրաստման այդ նախաձեռնություններն օգնել են բարձրացնել իրավական ոլորտի մասնագետների իրազեկության մակարդակն այդ ոլորտում և բարելավել են դրանց արդյունավետ արձագանքելու վերջինների կարողությունները, սակայն անհրաժեշտությունից ելնելով, կրկին կոչ է արել Հայաստանի իշխանություններին ակտիվացնել իրենց ջանքերն այդ ոլորտում[110]:

---

[103] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18500
[104] http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/libe/dv/11_revframework_statute_/11_revframework_statute_en.pdf
[105] http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13175&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html
[106] http://www.museumoftolerance.com/site/c.tmL6KfNVLtH/b.5158109/k.3C5F/What_Does_Tolerance_Mean_to_You/
[107] http://www.police.am/news/view/%D5%BA040818.html
[108] http://www.police.am/news/view/%D5%BA040818.html
http://www.police.am/news/view/%D5%BA2060818.html
[109] http://www.pinkarmenia.org/hy/publications/report/
[110] https://rm.coe.int/fourth-report-on-armenia-armenian-translation-/16808b5538

Մարդու իրավունքների պաշտպանի արձագանքը

ՄԻՊ արձագանքն ու աշխատանքները[111], թեև եղել են բավարար՝ այն առումով, որ շուտափույթ արձագանքելով ու խտրականության արգելքի ուղերձով են հանդես եկել, սակայն դրանք հիմնականում միտված են եղել դեպքի հանգամանքների և դրա առնչությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ու պարզաբանումներ ստանալուն: Բացի այդ, ՄԻՊ-ը տուժողներից որևէ մեկի հետ կապ չի հաստատել:

Վերջինիս ներկայացուցիչները կապ են հաստատել և հանդիպումներ են ունեցել ոստիկանության, ինչպես նաև Շուռնուխի բնակիչների հետ: Ապա՝ հայտարարվել է, որ օրենքով նախատեսված լիազորությունների սահմաններում գործի նյութերին ծանոթանալուց և կողմերի բոլոր մտահոգությունները քննարկելուց ու ամփոփելուց հետո, Պաշտպանի կողմից կներկայացվեն առաջարկներ: Սակայն մինչ այժմ վերջինս ոչ մի արձագանք չի տվել, բացի դեպքի վերաբերյալ հայտարարություններից:

Բնականաբար ՄԻՊ-ը՝ որպես անկախ պաշտոնատար անձ, ով հետևում է մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, խախտված իրավունքների վերականգնմանը, ոչ պատշաճ արձագանքի կամ համապատասխան գնահատականի դեպքում պարարտ հող է ստեղծում պետական մյուս մարմինների համար՝ անգործության մատնելը կամ ոչ պատշաճ վարքագծի դրսևորումը շարունակելը՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքեր հնչեցնելու, խտրական վերաբերմունք դրսևորելու, բռնություն գործադրելու և նման այլ դեպքերի գործով արդար քննություն իրականացնելու կամ համապատասխան պաշտոնական դիրքորոշում արտահայտելու համար:

Panorama.am ՄԻՊ գրասենյակ

Եզրահանգում

Այսպիսով, հիմք ընդունելով Շուռնուխ գյուղում 9 երիտասարդների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեբանական բռնություններին հաջորդած անհանդուրժողականության կոչերը, ատելության խոսքերը, բռնության կոչերի, խտրական վերաբերմունք պարունակող արտահայտությունները, կարող ենք եզրակացնել, որ թեև Հայաստանի Հանրապետությունը թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավական ակտերով պարտավորվել է ապահովել սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականության բացառումը, սակայն ԼԳԲՏ անձանց իրավիճակը շարունակում է մնալ ծայրահեղ վատ՝ մշտական ատելության և անհանդուժողականության մթնոլորտում: Թեև 2003թ.-ից նույնասեռականությունը դադարել է լինել քրեորեն պատժելի, իսկ սահմանադրորեն ԼԳԲՏ անձինք ունեն իրավահավասարության, խտրականության բացառման և երաշխավորված իրավական պաշտպանվածության այն նույն իրավունքները, ինչ ՀՀ մյուս բոլոր քաղաքացիները, իրավակիրառ պրակտիկայում իրավիճակային նշանակալի փոփոխություններ չեն գրանցվել՝ մնալով որպես լոկ օրենսդրական լայն ամրագրումներ:

Այսպես, համաձայն ՀՀ Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 81-րդ հոդվածների, Կոնվենցիայի 14-րդ հոդվածի, Կոնվենցիային կից թիվ 12-րդ Արձանագրության 1-ին հոդվածի, ինչպես նաև՝ Գենդերային ինքնության և սեռական կողմնորոշման հարցերով ՄԱԿ-ի 2008թ. հռչակագրի, որն արգելում է սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, Հայաստանը պարտավոր է ապահովել ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության արգելքի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ վերոնշյալ հիմքերով խտրականությունը բացառելու համար:

Բացի այդ, Հայաստանը ստորագրել և վավերացրել է ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի մի շարք այլ պայմանագրեր, համաձայնագրեր ու այլ փաստաթղթեր, սակայն բազմաթիվ զեկույցներ, որոնք ամփոփում են մարդու իրավունքների իրադրությունը գործնականում, հաստատում են, որ պետությունը չի կատարում իր պարտավորությունները, երբ խոսքը վերաբերում է սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով իրավախախտումներին:

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ Շուռնուխում կատարված հանրային մեծ հնչեղություն ձեռք բերած բռնությունը ոչ միայն արտացոլում է հասարակությունում ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ որպես հայաստանյան իրականությունում ամենախոցելի խմբերից մեկի հանրային խիստ բացասական վերաբերմունքը, այլև արտահայտում է հասարակական բոլոր շերտերի խնդրի էության, հասարակության իրավագիտակցության ցածր մակարդակի, արմատացած ավանդապաշտական և կրոնական չափազանց ծայրահեղ մոտեցումները և մասնավորապես՝ սեռական առողջության և վերարտադրողական իրավունքի, մարդու իրավունքների և ազատությունների մասին ոչ բավարար, և, անգամ, հիմնային գիտելիքներ չունենալու մակարդակը:

Պետական և հասարակական գործիչների, կրոնական համայնքի ներկայացուցիչների ատելություն և անհանդուրժողականություն սերմանող խոսքեր, բռնության կոչեր, խտրական

վերաբերմունք պարունակող արտահայտություններն էլ ավելի են հրահրում, բորբոքում, տարածում, խրախուսում, արդարացնում ատելությունը, անհանդուրժողականությունը ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակության առանց այն էլ չափազանց բացասական, խտրական, թշնամական վերաբերմունքը և դրդում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնություն գործադրելուն:

Յուրաքանչյուր պետություն ազատ, անկախ, իրավական, սոցիալական, ժողովրդավարական երկիր կառուցելու գործընթացում ունենում է բազմաթիվ խոչընդոտներ: Իսկ այդ գործընթացը ճիշտ ուղղությամբ է գնում և կառուցումը հնարավոր է դառնում միայն մարդու՝ որպես բարձրագույն արժեքի և նրա անօտարելի արժանապատվության՝ որպես իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքի ճանաչումից:

Իսկ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելը ու պաշտպանելը իշխանության պարտականություն է, և այն սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Դրանք սահմանադրորեն հռչակված և երաշխավորված դրույթներ են և լոկ ամրագրված խոսքեր չեն: Ուստի բոլորը պետք է ընդունեն և հարգեն բոլորի արժանապատվությունը՝ որպես անխախտելի, անգին արժեք:

Բայց բոլորը տարբեր են, տարբեր են իրենց սեռով, տարիքով, մաշկի գույնով, ռասսայով, էթնիկական կամ ազգային ծագումով, կրոնական հավատալիքներով, սոցիալական դիրքով, իրենց տեսքով, խոսքով, վարքով, նախասիրություններով ու արժեքներով, ԼԳԲՏ մարդիկ, ի թիվս դրանց, նույնպես տարբեր են, տարբեր են հասարակության մեծամասնության կողմից սոցիալ-մշակութային, կրոնական, պատմական երկար ժամանակահատվածում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ ձևավորված «նորմաներից»:

Եվ հենց այդ տարբերությունների ընդունումն ու հարգալից վերաբերմունքը յուրաքանչյուր անձի՝ այնպիսիսն, ինչպիսին, որ այն կա, ստեղծում է հասարակական համակեցության ներդաշնակությունը, երբ ցանկացած անձի համար ապահովված է իրավահավասարությունը, և բացառվում է խտրականությունը՝ անկախ որևէ հատկանիշներից:

Միայն այդպիսի իրավական գերակայության պայմաններում է հնարավոր ապահովել արդարադատություն, քաղաքակիրթ առաջընթաց, սոցիալ-տնտեսական զարգացում, և մարդու իրավունքների և ազատությունների լիարժեք իրացում:

Ուստի, Հայաստանի Հանրապետությունը, Սահմանադրությամբ և վավերացրած միջազգային փաստաթղթերով պարտավորված լինելով ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունն ու լիարժեք իրացումը, պարտավոր է անհրաժեշտ բոլոր ջանքերը գործադրել վերացնելու ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության խոսքը, ինչպես նաև ատելության հիմքով այլ հանցագործությունները, մասնավորապես՝ բացառել խտրականությունը հիմնված ցանկացած հատկանիշներից և, իհարկե, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերից:

[111] *http://www.ombuds.am/media/79568.html*
http://www.ombuds.am/media/79546.html
http://www.ombuds.am/media/8949.html

Առաջարկություններ

- ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել ատելության հիմքով հանցագործությունները, այդ թվում՝ խտրականությունը՝ հիմնված սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա.

- ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել ատելության խոսքի հասկացությունը, սահմանել պատասխանատվություն որոշակի հատկանիշներ ունեցող անձանց, ներառյալ՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի համար:

- Կազմակերպել և անցկացնել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության, ինչպես նաև դրանցով պայմանավորված ատելության խոսքի, դրա քննության առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացներ ու իրազեկվածության բարձրացման միջոցառումներ իրավակիրառ մարմինների համար:

- Միջոցներ ձեռնարկել, որ ոստիկանությունը զերծ մնա այնպիսի բացասական հայտարարություններից, որոնք խթանում են ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականությունը, ատելությունն ու անհանդուրժողականությունը:

- Միջոցներ ձեռնարկել ՁԼՄ-ների համար հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքը բացառող հստակ ձևակերպված դրույթներով լրատվական էթիկայի կանոնագիրք ընդունելու, բոլոր լրատվամիջոցների կողմից այդ փաստաթղթի նկատմամբ հավատարմությունը խթանելու և լրատվական ոլորտի մասնագետների համար համապատասխան վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ:

- Պետական/քաղաքական գործիչները հանդես գան հրապարակային հայտարարություններով՝ դատապարտելով հոմոֆոբ/տրանսֆոբ բնույթի ատելություն սերմանող խոսքը և բռնությունները:

- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության գործողությունների պլանում ավելացնել ծրագիր, որը կներառի ԼԳԲՏ անձանց իրավունքների և նրանց կենսապայմանների վերաբերյալ իրազեկության և հանդուրժողականության մակարդակի բարձրացման միջոցառումներ:

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007թ-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես Փինք Արմենիա: Փինքը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքահեն կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստեղծվել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձնաց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

Կազմակերպության գործունեության առաջին իսկ օրվանից՝ Փինք Արմենիան նախաձեռնել և իրականացրել է տարբեր միջոցառումներ և ծրագրեր՝ բարձրացնելով հասարակության իրազեկվածությունը սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, դրանց կանխարգելման վերաբերյալ, ինչպես նաև այնպիսի գործողություններ, որոնք խթանում են անվտանգ սեռական հարաբերություններ և վարքագիծ: Հետագայում կազակերպության գործունեությունը և ծառայությունների տրամադրման ոլորտն ընդլայնվեց՝ կազմակերպության օրակարգում ներառելով մարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնահարցերը:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպությունը տրամադրում է ծառայությունների ամբողջական փաթեթ ԼԳԲՏ համայնքի այն ներկայացուցիչներին, ում իրավունքները ոտնահարվել են սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և/կամ գենդերային արտահայտման հիմքով: Ավելին, կազմակերպությունը ներկայացնում է ԼԳԲՏ անձանց կարիքներն ու շահերը, ինչպես նաև ջատագովում այդ խնդիրների լուծումն ու իրավական պաշտպանվածությունը տեղական, պետական, ինչպես նաև միջազգային մակարդակներում:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպությունը խրախուսում և խթանում է հավասարության, խոցելի խմբերի ընդունման գաղափարները, նվազեցնում է ցանկացած հիմքով խտրականության արտահայտումը՝ հաստատելով մշակութային զգայունության և բազմազանության նկատմամբ հարգանքի միջավայր:

10 տարիների ընթացքում կազմակերպությանը հաջողվել է աչքի ընկնել իր թափանցիկ, բաց և նվիրյալ աշխատանքով: Փինքը փոքր տեղական կազմակերպությունից վերաճել է միջազգայնորեն ճանաչված և վստահելի կազմակերպության: Կազմակերպությունը հաստատել է կայուն համագործակցություն սեռական առողջության, մարդու իրավունքների պաշտպանության, խտրականության դեմ պայքարի, գենդերային հիմնահարցերի բնագավառներում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: